

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Վ. ՊՈՏՏՈ

ՂԱՐԱԲԱՂԻ  
ԱԹՎՁԻՆ ԿՅՄՎՎՈՐՆԵՐԸ

with Rho fluorescent  
and nuclear  
activity

Aug. 30th

Վ. Պ Ա Տ Տ Ո

Բ. Խոտո.

ПЕРВЫЕ  
ДОБРОВОЛЬЦЫ КАРАБАГА

ВЪ ЭПОХУ  
ВОДВОРЕНІЯ РУССКАГО ВЛАДЫЧЕСТВА

(Меликъ-Ваны и Акопъ-юзбаши Атабековы).

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՅԱՋԻՆ

ԿԱՄԱԿՈՐՆԵՐԻ

Կովկասում՝ ոռւսական տիրապետության  
հաստաման դարաշրջանում՝  
(Մէլիք Վանի և Հակոբ Յուղրաշի Աթարեկովները)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 1974

ՏԻՓԼԻՍТЬ.  
Скоропечатня М. Мартиросянца, Михайл. просп., д. № 81  
1902.

## Ա Ր Ա Ջ Ա Բ Ա Ն

Կովկասի ժողովուրդների նոր պատմության վերաբերյալ մեծ քանակությամբ գրականություն է հրատարակվել։ Դրանց մեջ իրենց արժանի տեղն ունեն գինվորական պատմաբան Վ., Պոստոյի աշխատությունները։

1881-1891թվականներին հրատարակված "Կավազսкая война в отдельных очерках, эпизодах, биографиях" հինգ հատորանոց ստվարածափական նրա հայտնի աշխատություններ միշտ էլ գտնվել է կովկասագետների ուշադրության կենտրոնում և հարուստ նյութ մատակարարել կովկասի նոր պատմությամբ գրադադարին։

Վ. Պոստոյի յափառույն գործերից մեկը, անտարակույս, "Первые добровольцы Карабаха" աշխատությունն է, որը հրատարակվել է 1902թվականին թիֆլիսում։

Ծագալով ոչ մեծ, բայց բովանդակությամբ հարուստ, այս աշխատության մեջ Հեղինակը ուսւապարսկական պատերազմների բնանկարի վրա վեր է հանել ընդհանրապես հայերի և մասնավորապես Ղարաբաղի հայ կամավորների գերրան կովկասը պարսկական բռնակալության ծանր լծից ազատագրելու և թուաստանին միացնելու գործում։

Աշխատության մեջ բնթերգողը հետաքրքրական տեղեկություններ կարող է գտնել Ղարաբաղի մելիքությունների պատմական անցյալի, նրանց ներքին և արտաքին փոխհարաբերությունների, 19-րդ դարի սկզբի ուսւապարսկական պատերազմների, պարսկական գործերի ասպատակությունների, տեղական ժողովուրդների ձագի արագերի մերաբերությունների միացնելու գիտելիությունը։

Բայց արդ բոլոր լրացուցիչ և օժանդակներութերեն, Գլխավորը Ղարաբաղի հայ կամավորներ վանիս (Հովհաննես) յանձնակորյուղաշինների (հարյուրապետներ) անօրինակ միջազգործություններն են, որոնք ամենայն մանրամասնությամբ և ջերմությունների կայացման սույն աշխատության մեջ ներկայացնելու համար անհնարինությունը է։

Հեղինակին հաջողվել է փաստական հարուստ նյութերի հիման վրա վերհանել հայ հերոսներ Հեղաննեմանկան հակոբ յուզբաշինների հայրենասիրական և ազատագրական գործունեություններ, նրանց  
"Mesrop Mashtots University" 3

Օյ № 10801  
«—» 11 2018.

Թարգմանիչ  
Ս.Հ. ԱԱՐԳԱՅՅԱՆ  
Թարգմանություն  
Խ.Մ. ԱԱՐԱԿՅԱՆ

Պատասխանատու խմբագիր պրոֆ. Վ.Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

Первые добровольцы Карабаха  
(На армянском языке)

Издательство Ереванского университета  
Ереван — 1974

մեծ ծառայությունները ոչ միայն տեղացիներին, այլև ոռւս գին-  
վորներին ու զորական միավորումներին կոտորածից, սովոր ու  
կործանումից փրկելու համար:

Գրքում բերված է կովկասյան պատերազմներին մասնակցած  
աշքի ընկնող ոռւս զինվորականներ Կարյագինի, Կոտյարեսկու,  
Լադինսկու, Բտիշչեի, Գուգովիչի, Ներուսինի և ուրիների վկա-  
յությունները զովհաննես և Հակոբ Աթարեկյանների քաջագործու-  
թյունների մասին: Նրանք Հայ կամավորներին անվանում են քաջ,  
խիզախ, անձնազոհ մարտիկներ, ոռւս զինվորների իսկական բարե-  
կամներ և փրկարարներ: Լադինսկին գրում է, որ Վանի յուղբաշին  
եղավ «պաշարված և սովի դատապարտված մեր գորախմբի իսկա-  
կան բարերար և փրկիչը»:

Հարաբաղի Հայ կամավորների մարտական սխրագործություն-  
ների, ոռւս զորքերին մատուցած նրանց մեծ ծառայությունների  
մասին վ. Պոտտոյի Հաղորդած տեղեկությունները հիմնավորված  
են Հաստատված են պատմական վավերագրերով: Այս առումով  
սույն աշխատությունը կարող է անգամ սկզբնաղբյուրի դեր կա-  
տարել:

Հարաբաղի առաջին Հայ կամավորները Հայ ժողովրդի պա-  
տագրական պայքարի խիզախ մարտիկներն էին, Հայրենիքի պա-  
տության և յավ ապագայի Համար մարտնչող հերոսներ:

Առաջին անգամ Հայերեն թարգմանությամբ Հրատարակելով  
վ. Պոտտոյի արժեքավոր այդ աշխատությունը, Համոզված ենք  
որ այն կօգնի ուսանողներին և բնթերցողների յայն շրջաններին  
մոտիկից ծանոթանալու մեր նոր պատմության ուշագրավ դրվագ-  
ներից մեկին:

### Պրոֆ. Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԱԹՅԱՋԻՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

ԿՈՎԿԱՅՈՒՄ ՔՈՒՄԱԿԱՆ ՏԻՐԱՎՈՅԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ  
(ՄԵԼԻՔ-ՂԱՆԻ ՈՒ ՀԱԿՈՅ-ՑՈՒԶԲԱՇԻ  
ԱԹՅԱԲԵԿՈՎՆԵՐԸ)

Հայկական երբեմնի մեծ թագավորության բեկորներից պար-  
սիկներին պատկանող Ղարաբաղն է միայն պահպանել իր համար,  
որպես անցած մեծության հուշարձաններ, Հայ մելիքների այն  
տոհմական կայգած քնները, որոնք գրադաւում էին Արաքսից մինչեւ  
Կորակ-շայր՝ (Գանձակից, Ելիզավետպոլից<sup>20</sup> վերստաչափ հե-  
ռու) բնկած ամրող գտարածությունը:

Ինչպես վկայում են ոռւսական հնագույն վավերագրերը, Ար-  
ցախում, կամ ցածրացիր Ղարաբաղում այդ տոհմական կայգածք-  
ներն էին՝ Դիզակը, Վարանդան, Պաշենք, Ջրաբերդն ու Գյուլիս-  
տանը (Իգիրմիդորդ), որոնք էլ իրականում կազմում էին բուն  
Ղարաբաղի տիրապետությունը:

Ղարաբաղի լեռնային մասը՝ Այսուիքը կամ Զանգեզուրը իր  
մեջ պարունակում էր միայն մեկ կարեոր մելիքություն՝ Ղշթաղը,  
որը շրջապատված էր Հայկական այլ բավականին փոքր մելիքների  
տիրութներով, իսկ բուն Արաքսին Հարող մասը բնակեցված էր  
մեծամասմբ թաթարական վաշկառուն ցեղերով: Հայկական թա-  
գավորության քայլքայման և համատարած ասպատակության բն-  
թացքում միայն այդ տիրութների տերերը՝ մելիքներն էին, որ  
միայնակ կարողացան պահպանել երկրում իրենց հնագույն, ժա-  
ռանգական իրավունքները և անգամ պահպանել Համարյա մինչեւ  
19-րդ դարի սկիզբը քաղաքական այն կարգը, որը Հաստատվել էր

այստեղ պարսկական Սեֆևիյան թագավորների ժամանակներից ի վերև Որպես Պարսկաստանի վասարներ, նրանք իրենց ժառանգական իրավունքների մեջ հաստատվում էին պարսկական շահերի կողմից, և նրանց Հարկ էին վճարում, սակայն դրա վոխարեն պահպանում էին իրենց Երկրամասերի ներքին կառավարման լիակատար անկախությունը, ունեին իրենց դատարանն ու պատժելու իրավասությունը, իրենց ամրակուռա ամրոցները և նույնիսկ իրենց սեփական զորախմբերը, որոնք պաշտպանում էին Երկրամասը լեզուիների ու թուրքերի Հարձակումներից:

Սակայն որքան էլ այս մելիքությունները գորեղ լինեին, նրանք ժամանակի բնթացքում սկսեցին անկում ապրել, հատկապես այն բանից հետո, երբ Երկրամասում սկսեցին գերակշռող դիրք գրաւվել մեկ պարսիկները, մեկ թուրքերը, որոնք վիճարկում էին իրար հետ Անդրկովկասի վրա տիրապետելու ձգուումը: Եվ բոլոր այդ ժողովուրդները միանման իրենց հետարց թողնում էին միայն ամայացված դաշտեր ու այրված, հրկիզված զյուղեր: Տարեցտարի, ողջ Հարյուրամյակներ է ձգվել այս տանջալից ու անմար պայքարը, և քրիստոնյա փոքր ժողովուրդը՝ շրջապատված մաշմեդական աշխարհով, իրեն պահել է հերոսարար: Այս քրիստոնյա ժողովրդի համար միակ լուսավոր ճառագալթը ծագեց 18-րդ դարի կեսին, երբ Պարսկաստանում Հաստատվում է Հաղթական Նադիր-Շահի թագավորությունը, որը գնահատելով Ղարաբաղի մելիքների ծառայություններն ու քաջությունները, իր իշխանության հզորությամբ ջանում էր զորավիդ լինել նրանց, բայց դրա փոխարեն Նադիր-Շահի մահը, որը ինչպես Հայոնի է զոհվեց 1747 թվին, վերջնական Հարված Հասցրեց մելիքների ինքնավարությանը:

Նադիր-Շահից հետո Պարսկաստանում պահին տիրանալու Համար ծայր են առնում մի շարք ներքին կոիվներ, օգավելով դրանից, բուն Անդրկովկասում նույնպես ծագում են խժություններ, որտեղ շատ փառամոլներ ճանապարհ են Հարվածում դեպի խանական շնորհներն ու դառնում են իրենց կողմից Պարսկաստանից անջատած ծայրամասերի տիրակալներ: Այդպես է եղել Շաքիում ու Շիրվանում, և ճիշտ նույն ճակատագիրն է վիճակում 1748 թվին Ղարաբաղին, երբ Զեանշիր զեղի ավագներից մելք ուն Փառա ուքի է Հանում իր քոչվոր թաթարներին և իրեն հոչակում է

## Ղարաբաղի խան

Տեղի՝ Երկրամասի բնիկների՝ Հայերի միանալանության գեղքում, իհարկե, այդ երբեք չէր կարող պատահել, բայց Երկրի նոր դժբախտությունների պատճառը հանդիսացավ Հենց նրանց ներքին երկպառակությունները:

Պատմությունը հայտնում է, թե Արքախի երկու մելիքներ՝ Ջրարերդի ու Գյուլիստանի տիրակալներ՝ Աղամն ու Հովսեփի իրենց գեմ են ուղղում Վարանդալի հզոր մելիք Շահ-Նազարի թրշնամնքը, վերջինս Հակառակորդ ներքին Հաղթահարելու համար սերտ դաշն է կապում Փանահ-խանի հետ, նրան իրավունք տալիս իր աիրույթում կառուցելու Շուշի ահեղ բերդը:

Բարձր, մինչեւ ամպերն էր Հասնում, – ասում է պատմիչը, – զարիթափ ժայռերի մեջ կառուցված Շուշուու գրանիտե այս ամրոցը և յենների արանքում մնում էր մի նեղ անցք, որը բաց ճակատամարտում ուժով վերցնելը անիմաստ կիխներ: Ով տիրեր այս բերդին՝ նա կիշխեր Երկրամասին, և Արքախի մելիքները Հանգամանքների ստիպմամբ Հարկադրված էին Փանահին բնդուններու Ղարաբաղի տիրակալ ու խան:

Ակրում մելիքները գեռ պահպանում էին իրենց ներքին անկախությունը, բայց ակնհայտ էր, որ նրա ժառանգորդի՝ Իրրահիմ-Շահնի տիրապետության օրոք այդ ինքնուրությունները պիտի փլուզվեր, որովհետեւ Իրրահիմը պատկանում էր արեելյան այն տիպի բռնակալներին, որոնք իրենց չուրցը ոչ մի ինքնուրությունը չէին Հանգուրժում, առավել ևս քրիստոնյա մելիքներին, որոնց չհավատալու համար նա բավականին հիմք ուներ: Նրանց մեջ վերջնական խզումը եղավ 1783 թվին, երբ ոռւսական թագուհին իր հոգանակության տակ առավ Վրաստանը: Այդ ժամանակ Ղարաբաղի մելիքները իրենց մեջ դաշտնի Հաստատած պայտականացրությունը կապում էր կառավարությունը 1748 թվին Ղարաբաղին, երբ Զեանշիր զեղի ավագներից մելք ուն Փառա ուքի է Հանում իր քոչվոր թաթարներին և իրեն հոչակում է

Իրրահիմը յուռմ էր, քանի դեռ նրան սպառնում էր ոռւսական սպինների մոտիկությունը, բայց թիֆլիս եկած զորքերը Հազիկ էին վերադարձել զիծը, երբ նա շտապեց իսկույն իր ծանր ձեռքը դրնել մելիքների վրա: Նրանցից ոմանք սպանվեցին ծածուկ վարձկանների ձեռքով, մյուսները բանտարկվեցին, երբորդ ները փախան Վրաստան, կամ Հարեան խանությունները, և նրանց ունեցվածքը բոնագրավ վեց խանի գանձարանի օգտին: Վերջինների թվում էր

Ջրաբերդի մելիք Մեծիումը, մելիք Աղամի որդին, որը իրեն հպատակ Հայերի մի մասով անցավ Գյանջայի Ջավադ խանի տիրությունը: Այսպէս, մեկը մյուսի հետից ընկան Հայաստանի վերջին ժառանգական կալվածքները:

Փախած ու ոչնչացված մելիքների փոխարեն իբրահիմը նշանակում էր նորերին, բայց Հարգված ավագներից, կամ բեկերից, որոնց, ի տարբերություն ժառանգական մելիքների, ժողովուրդը արդեն կոչում էր խանական մելիքները: Ջրաբերդում մելիք Մեծի Մեծիումի փոխարեն նշանակել էր նույն շրջանի բնակիչներից Հարգված մեկին՝ միուսամ Ալավերդովին (Ալավերդյան):

Այս ժամանակ Ջրաբերդի մելիքության կուսապատ գյուղում ապրում էր յուղբաշի Հարություն Աթաբեկովի (Աթաբեկյան) բնանիքը, որի ավագ որդին, Հետագայում՝ պատմության մեջ մրտավ Վանի-յուղբաշի, կամ մելիք-Վանի անունով, միաժամանակ թուստամին մոտ կանգնած մարդ էր Համարվում:

Որոնել, թե ովքեր են եղել Աթաբեկովների նախնիները, կլիներ ավելորդ ջանք, որովհետեւ այնպիսի երկրում, ինչպիսին Ղարաբաղն էր, որտեղ երբեք չէին եղել եկեղեցական չափաբերական մատյաններ, ոչ էլ տոհմագրություն, ուր ամեն ինչ հիմնվում էր միայն ծեր մարդկանց կողմից հաղորդված ավանդությունների և կամ մի քանի տարեգիրների վկայությունների վրա, հնարավոր չէ, հետեաբար, ճշտել տոհմի պատմությունը:

Ինչ վերաբերվում է Աթաբեկովների բնտանիքին, ապա դատելով 1807 թվականին էջմիածնի վանքի կողմից կաթողիկոս Եփրեմի ստորագրությամբ տրված վկայականին՝ Աթաբեկովների բնտանիքը պատկանել է Հայաստանի հնագույն տոհմերից մեկին, այդ հանգամանքի մասին, ի միջի այլոց, վկայում է նաև յուղբաշի կոչումը, որը այդ բնտանիքում պնդնում էր ժառանգաբար: Ավելի ուշ եղած հիշատակություններում յուղբաշի կոչումը սովորաբար մեզանում Հավասարեցվում է գյուղապետի, կամ ավագի հետ: Հին Ղարաբաղում այդ կոչումը նշանակում էր Հարյուրապետ, իսկ պարսկական Սեֆերյան թագավորների դարաշրջանում՝ նույնիսկ Նադիր-Շահի օրոք ու նրանից հետո էլ յուղբաշի կոչումը կրում էին նաև բարձր դասի մարդիկ: Այսպէս օրինակ, զանգեզուրցի Օբբելյան տոհմից մեկը կոչվում էր Շարան-յուղբաշի, հետո, Ղարաբաղի Հայտնի հերոս Ավան-յուղբաշին, որը ութ-

տարի թուրքերից պաշտպանեց Հայրենի լեռները, հետագայում կոչվեց Մելիք-Ավան-խան և թուրքերի դեմ մղված կոփներում, որպէս մարտական սիրագործություններով փառաբանված անձ, թագուհի Աննա Խվանովնայի կողմից 1734 թվին նրան շնորհվեց ոուսական գեներալի աստիճան: Երբ Նադիր-Շահը թուրքերի տիրապետությունից ազատագրեց Հայաստանն ու Վրաստանը, Շիրվանի նահանգապետ Նշանակեց խանի կոչումով ոմն Ահմեդ-յուղբաշու: 1796 թվականին Պավել Կայսեր Հովանավորությունը Հայեցելու պնդած մելիք Զումշուդի շքախմբի մեջ կար չառ աղեցիկ մի անձ, մելիք Մաթեոսի ժառանգներից՝ ոմն Պետրոս բեկ, որը հայտնի էր նաև Պետրոս-յուղբաշի կոչումով: Վերջապես, արդեն մեր օրերում, պարսկական վերջին կովի ժամանակի, երբ Աբրամ-Միհրզան շրջապատել էր Շուշին, Թարխանյան երկու եղբայրները՝ Սաֆար յուղբաշին՝ ու Խուստամ-յուղբաշին, Հինգ Հարյուր Հայերով գրավելով Դաշ-Ալիթիկ<sup>4</sup> կիրճը Շուշինկա գետի վրա, պաշտպանեցին ջրաղացները տանող անցուղին, որտեղ պաշարված Շուշու կայազրի համար այլուր էին աղում\*:

Այսպիսով, նախինում Ղարաբաղում յուղբաշի կոչման գոյության հարցը մեզ բերում է այն համոզման, որ այդ կոչումը շնորհվում էր Հասարակական Հայտնի դիրք գրավող անձանց և այն ծառայում էր որպես ազնիվ ծագում ունենալու ցուցանակ: Անկասկած էր, որ Աթաբեկովների տոհմում առաջին պատմական դեմքը, որը 17-րդ դարում կրել է յուղբաշի կոչումը, եղել է ոմն Աթաբեկ երկրորդը, որն իրենից հետո թողել է երկու զավակներ՝ Վանի և Գուլի: Հետագայում Վանու ժառանգները փոխադրվել են իտուսատան, ուր ապրում են մինչեւ օրս: Գուլիի ժառանգները մնացին Ղարաբաղում և նրա թոռը, Հարություն յուղբաշին, որի մասին ասված է վերելում, Ցիցիանովի ժամանակակից էր ու Վանի և Հակոբ յուղբաշիների հայրը:

18-րդ դարի վերջին Ղարաբաղի վրայով անցած քաղաքական փոթորիկները քայլացին Աթաբեկովների բնտանիքի երբեմնի նշանակալից ունեցվածքը, բայց և այնպես այդ խառնակ ժամանակներում, երբ Աղա-Մուհամեդ-շահի արշավանքներին ավելա-

\*Բորբ այս տեղեկությունները փոխանված են պաշտոնաթող գնդապետ Յա.Դ. Լազարեին (Լազարյան) պատկանող «Հայ ժողովրդի դարավոր ժառայություններ» բավական հետաքրքիր ձեռագրից:

ցան ժողովրդական աղեաները՝ սովոր և ժանտախար, որոնք նույնապես ունեցան իրենց բազմաթիվ գոհերը, այդ բնաանիքը ունեոր էր համարվում, տիրում էր Հողերի, ուներ ջրաղացներ, և նույնիսկ սեփական ռանչպարներ։ Նրանք առաջվա նման ապրում էին կուսապատում, որը այն ժամանակ գրեթե դատարկվել էր, որովհետեւ բնակիչները հազարներով փախել էին տարբեր կողմեր և Ղարաբաղի բնակչությունը, ինչպես ծերունիներն են ասում, պակասել էր Համարյա քառասուն հազար ծխով։ Ողջ երկիրը իրենից մի հակա ավերակ էր ներկայացնում, իսկ Պարսկական սահմանին հարող հարթավայրերում ոչ ոք չէր համարձակվում բնակվել, այնտեղ ամենուրեք երեւում էին միայն դատարկված գյուղեր, թթենու այդիների բնդարձակ մնացորդներ, և ամայի ու անմշակ թողնված դաշտեր։

Ի գեալ, Ղարաբաղի վիճակի մեջ արդեն փոփոխություն էր հասունանում և այն անխուսափելի էր, անդ իմադրելի այն ժամանակից, երբ 19-րդ դարի արշալույսին Վրաստանը, վերջ դնելով իր ինքնուրույն գոյությանը, ձուլվեց ոսւսական մեծ կայսրությանը։ Դրանից հետո Ղարաբաղի Հարեան Գյանջայի տիրության անկումը հերթական խնդիր դարձրեց նրան մոտիկ Ղարաբաղի խանի վիճակի հարցը։ Ցիցիանովը, շրնկներով ասիական տիրակալների խորամանկ ու փաղաքուշ խոսքերի ազդեցության տակ, կարականապես պահանջեց իրենց ապագա մտադրությունների մասին տալ դրական պատասխան։ «Քիչ շեմ զարմանում այն բանի վրա, — գրում է նա Ղարաբաղի խանին դեռ Գանձակի մատուցներից, — որ ես ոսւսական անհաղթ զորքերով մեկ ամսից ավելի այստեղ եմ, և վեց օր էլ անցել է ամրոցը գրոհով վերցնելուց, իսկ դուք հարեանությամբ դանվելով այսքան մոտիկ, մինչեւ օրս ինձ մոտ ոչ ոքի չեք ուղարկել ողջունի խոսքով։ Զավադ-խանի գոռոզությունը սրբվեց արյունով և ես նրան շեմ խղճում, քանի որ գոռոզներին Աստված հակառակվում է։»

Հուսով եմ, որ Դուք չեք ուղենա նմանվել նրան և կհիշեք, որ թույլերը ուժեղներին ենթարկվում են, և ոչ թե երազում են նրանց հետ շափվել։ Քանի որ «Գյանջայի ոչ մեծ տիրութը, — շարունակում է Ցիցիանովը, — մտել է ոսւսական անծայրածիր տարածության մեջ, — և նրա բնակիչները դարձել են թուսիայի սիրելի զավակները, ես որպես կասպից ծովից Սև ծովի բնկած երկրամա-

սի գլխավոր պետ, պաշտքս եմ համարում պահանջել, որ Դուք վերադարձնեք ինչպես հանգուցյալ Զավադ-խանի, այնպատճ էլ այստեղի թաթարներին ու Հայերին պատկանած երամակներն ու տավարը, որոնք իմ գորքովս մոտենալու ժամանական վատանգության նպատակով քչվել են Զեր տիրուլիթները»։ Խանը, ինքն իրեն արդեն վաղուց էր քչվել են Զեր տիրուլիթները։ Խանը, ինքն իրեն էր հասել պահամարում այն ամենի օրինական տերը, ինչ որ իրեն էր Հասել պահարազմի իրավունքով; այսպիսի պատահական ու անսպասելի ձեռով, ուղարկեց մի պատասխան, որը՝ Ցիցիանովի արտահայտությամբ՝ իր մեջ ոչինչ չէր պարունակում, բացի նրա խարդախ պարսկական հոգու սովորական խուսափանքներից։

Այն ժամանակ Ցիցիանովը հրամայեց մայոր Լիսանեիչին ճրնշում գործադրել և այդ ճանապարհով հատուցել Ելիզավետպոլի բնակիչներին նրանց կորստի դիմաց։

Սակայն դարաբաղցիները գգոն վիճակում էին և ժամանակին նկատելով ուսուսական ոչ մեծ գորավոմբի մոտեցումը, հոտն ու երամակները քշել էին լեռները։

Այն ժամանակ ձեռներեց Լիսանեիչը դիմեց հատուցման այլ միջոցի։ Ելիզավետպոլի մարզի բնակչությունը ավելացնելու համար Ցիցիանովը ամեն միջոցներով իր կողմն էր գրավում Ղարաբաղի Հայ Հողագործներին, դրանով միաժամանակ թուլացնելով իրավահիմ-խանի տիրապետության արտադրողական ուժերու Լիսանեից գրավեց 250 հայ բնտանիք, որոնց Ցիցիանովը հրամայեց բարեկանություն կորստի դիմաց։

Այս բնտանիքների թվում էր նաև Հարություն Աթաբեկովի բնտանիքը, որը կազմված էր՝ իրենից, կնոջից և ամուսնացած երկու զավակներից՝ Վանի-յուղբաշուց ու Հակոբից։ Այդ ժամանակ Ելիզավետպոլում հրամանատար էր Կովկասյան կոիվների պատմության մեջ Հայտնի գնդապետ Պավել Միխայլովիչ կարյագինը։ Նա գաղթականների տեղագործման գործում ցուցաբերեց գործունյամանակցություն, սակայն նրանց բարեկեցությունը ամուր ոտքերի գրա դնել Հնարավոր չէր, քանի որ գաղթականների և Հոտը, և երամակներն ու ողջ ունեցվածքը մնացել էր Իբրահիմ-խանի ձեռքում ու մտել նրա գանձարանու։ Ի գեալ, Անդրեկովկասում ջեպքերն այնքան արագ էին զարգանում, որ մի ժամանակակցի ճշմարիտ արտահայտությամբ՝ դժվար էր նրանց հետեւ։ Երկու տարվա ընթացքում Հնարավոր աղանդեցվեցին աջարները, ընկավ Գյանջան, բուն Վրաստա-

Նում ծագած խռովությունը, որը հրահրում էին փախստական վրաց արքայազուները, խաղաղեցվեց, Հնացանդեցվեց Օսեթիան, Երևան- յան արշավանքը ավարտվեց Հարուստ և բարեկեր Շորագյալի մարզի ձեռք բերումով։ Այժմ հերթի էր դրված Ղարաբաղը։ Մի կողմում էր ոռուսական գործերի սպառնալիքը, մյուսում՝ պարսիկներինը, ո- րոնք դեռ Աղա-Մուհամեդ-շահի ժամանակից դեպի Իրավահիմքը ու- նեին անհաջող ատելություն, Իրավահիմքը տառացիորեն գտնվում էր սայի ու կունի արանքում։ Նա Հասկանում էր, որ իր ինքնուրույ- նության վերջին ժամը Հասել է, որ ինքը պետք է ընտրի գերագույն տիրակալ՝ կամ ենթարկվի ոռուս կայսըին, կամ պարսիկ շահին։ Ընտ- րությունը նրա համար կասկածից վերէք։ Պարսիկներն արդեն կանգ- նած էին նրա հողերի սահմանում և իրենց կայազորով սպառնում են գրավել Շուշին։ Եթե այդ պատահեր՝ նրանք խանին իր հին մեղե- րի համար մահվան կդատապարտեին, իսկ լավագույն դեպքում՝ նր- րան կզրկեին ժառանգական տիրույթներից։ Այս ամենը խանին ըս- տիպեցին մտածել իր վիճակի մասին ու դիմել Յիշիանովին, խնդրել նրանից օգնություն, խոստանալով յանասիրաբար այսկցել թուսաս- տանին և պահպանել նրա նկատմամբ հավատարմություն։

«Թեպետ' և Զեր վարչի համար,՝ պատասխանում է Յիշիանովը խանին,՝ պետք չէր, որ ես միջնորդեի ու վերցնեի Ձեզ պարսիկներից իմ պաշտպանության տակ, որոնք իրենց սովորության Համաձայն կհանեին Զեր աչքերը, կամ կկտրեին Զեր քիթն ու ականջները, թե- պետ, կրկնում են, ընդհակառակը, Ձեզ պիտի տայի նրանց ձեռքն ու հետո միայն խլի նրանցից Շուշին ու Ղարաբաղը, ընդօրինակելով իմ կայսեր անսաելի բարեսրությունը, որը նման է ցերեկվա լու- սատու կարմիր արևի, որը տաքացնում է, սնուցնում, բարեգործում ու լուսավորում է ամենքին, ով գանկանում է վայելել այն, Հայտ- նում եմ Ձեզ ողջ թուսատանի սրբազնագույն, բարձր ու հաստ- վոր ինքնակալ ու Միապետի անունից, որ նա բարեհանձել է ամեն ինչ տայ մոռացության և Զեզ ներում պարգևել է ընդունել Ձեզ երանե- րի կայսերության հպատակության մեջ։ այն պայմանով, որ պահ- պանեք անսաման Հավատարմություն, Հաստատելով պայն Զեր երդու- մով, Հանձնեք ամրոցը ոռուսական զորքերին, պատանդ Հանձնեք Զեր ավագ որդուն, Հավատարմության համար տարեկան վճարեք ութ հազար թուման (չերվոնեց) Հարկ։»

Խանը պետք է բնդուներ այս պայմանները, և 1805թվի մայիսի 14-ի հրովարտակով Ղարաբաղը առհավետ մտավ ոռուսական հպատա- կության տակ։ Իշխան Յիշիանովը կայսեր անունից երաշխավորեց- պահպանել իրավահիմքանի տիրույթների ամբողջությունն ու ան- ձեռնամիւրիությունը, ինչպես նաև խանական իշխանության ժա- մանգական անցումը նրա հետագա ժառանգներին։ Ղարաբաղի բնա- կիչները իրենց բորոր իրավունքներով բնդունքում էին լայնարձակ ֆուսապատանի կայսրության այլ հավատարիմ հպատակներին հավա- սար, իսկ խանությունը պաշտպանելու համար մայոր Լիսանեիշի հրամանատարությամբ եկերների մի գումարտակ գրավեց Շուշին և ահղավորվեց ամ րոցում որպես կայ ազոր։

Դարյագինը օգտվեց այդ դրությունից, որպեսզի բարելավի Ելիզավետպոլ գաղթված Հայերի վիճակը, նրանց մի մասին ետ ու- ղարկեց իրենց Հայրենի ավելակները։ Սրանց հետ Կուսապատ վերա- դարձավ նաև Հարություն Աթաբեկովի ողջ ընտանիքը։ Բայց նա և ուսապառում այլևս ոչինչ չգտավ, ամեն ինչ թարանված ու Հա- մբարչակիված էր, ամեն ինչ խսում էր այն անելանելի աղքատության մտյին, որով բախտը սպառնում էր այդ ընտանիքին նաև ապագա- յում։ Սակայն կարյադինը պաշտպանում էր մեր նոր հպատակների շահերը, և թուլլ չտվեց, որ նրանք համնեին ծայրահեղ քայլքայման, որա պահանջով խւնը պետք է վերադարձներ այն ամենը, ինչ իւ ել էր։ Հարությունի ընտանիքը ստանալով իր նախկին հողերը, նորից ապրեց Հանգիստ ու լրիվ բավարարություն՝ օրհնելով ոռւսական կառավալության մեծահոգի պաշտպանությունը։ Սակայն խաղա- ղությունը այն ժամանակներում երկարատե չէր լինում, և Ղարա- բաղի վրա նոր սև ամպէր էին կուտակվում։

Պարսիկները չէին կարող ներել իրավահիմի դավաճանությունը, և նրանց առաջավոր ջոկատները, թվով տասը հազար՝ Փիր-Ղուլի- խանի Հրամանատարությամբ անցակ Արաքսը, շրջանցելով Խուդ- Ղամբերինի կամուրջը, որտեղ կանգնած էր Լիսանեիշի գումարտակը, Հպ վեց դեպի Շուշի, Լիսանեիշը նահանջեց ու փակվեց ամ րոցում։ Այս դեպում նա ճիշտ գնահատեց ամրոցի կարելոր նշանակությու- նը, որտեղ արդեն սկսվել էին անկարգություններ և, որոնց բռնկման մեջ, իշարկե, պարսիկների քաղաքականությունը անմասն չէր, և Լի- ուանեկը պարզ տեսնում էր, որ գործի բագակայությունը առիթ կտար գալիք հաններին բացելու ամրոցի գոներն ու ներս թողնելու պարսիկ-

Ներին:

Ցիցիանովը հավանություն տվեց այդ որոշմանը, սակայն Հույս չունենալով, որ Իբրահիմը համրնդհանուր չփոթության մեջ կկազողանա թաթարական աշխարհազորային հեծելազորներով օգնել Հիսանեհին, կոչով դիմեց Հայերին. «Միթք Դուք, Ղարաբաղի Հայեր, գրում էր նա, որ մինչեւ օրս փառաշանված էիք Զեր քաջությամբ, գարձել եք կնանման, բնդունեցեք նորից Զեր նախկին տեսքը, եղեք հայթանակների պատրաստ և ցույց տվեք, որ Դուք այժմ էլ Ղարաբաղցի նույն քաջ հայերն եք, ինչպես, որ նախկինում սարսափ եք եղել պարսկական հեծելազորի համար»:

Բայց դատարկված երկրում այժմ չկային ոչ Հին մարտիկները, և ոչ էլ նրանց համարձակ առաջնորդ-մելիքները. նրանցից ոմանք պառկած էին գերեզմանում, ուրիշները՝ իր՝ Իբրահիմ-խանի կողմից քայլավել ու աղքատացել էին, իսկ մեծամասնությունը բոյորովին հեռացել էր Հայրենիքից, դառնալով աստանդական հարեան երկրամասներում:

Այսպիսով, մեր զորքերը մնացել էին և իրենք իրենց սեփական ուժերով։ Այն ամենը, ինչ կարողացավ ուղարկել Ցիցիանովը՝ դա մի գումարտակ էր՝ 400 սկիններով, երկու հրանոթի ուղեկցությամբ, որը 1805 թվականի Հունիսի 18-ին գնդապետ Կարլագինի հրամանատարությամբ դուրս եկավ Ելիզավետպոլից։ Մինչեւ Շուշի 133 մերստ էր. ճանապարհը անցնում էր Աղդամ մեծ գյուղով, այնուհետեւ մտնում էր Ասկարան գետի նեղ կիրճը։ Հենց այստեղ էլ Շուշուց 25 մերստ հեռու, կիրճում ուղին հատվում է Ասկարանի բերդի պարով, որի ամրությունները տեղափորված են գետի երկու կողմերում և կազմված են աշտարակներից, որոնք իրար հետ կապվում են բարձր պարիսպներով։ Ասկարան գետի ափերը այնպես զարդարված են ու դիբ, որ ամրությունը շրջանցել հնարավոր չէ, մինչեւ անգամ գետի հունում կանգնած էին երկու աշտարակներ։

Կարլագինին Շուշիի կայազորին օգնություն ուղարկելիս Ցիցիանովը կանխատեսել էր, որ պարսիկները կարող են գրավել Ասկարանի բերդը, և այսպիսով, կանգնեցնել զորախմբի առաջացումը։ Դրա համար Հիսանեհիը հրաման էր ստացել նախօրոք գրավել Ասկարանը, կանխել թշնամուն, հետո հարգածել ֆիր-Ղուլի-խանին թիւ կունքից այն պահին, երբ Կարլագինը կհարձակվեր ճակաչից։ «Աչա ամենը ինչ կարող ենք անել, դրում է նրան գլխավոր հրամա-նատարը, միայն հավաքեցեք հեծելազոր»։ Սակայն հեծելազոր հա-

վաքելին արգեն անհնարի էր։ Ինքը, Լիսանեհիը, պաշարված էր Շուշիում, և այնաեղից դուրս գալ չէր կարող այն պատճառով, որ ամսոցը չմատներ հակառակորդին, իսկ դրանով կոչնչանար բոլոր նախորդ տարիների պտուղները։

Ի գեա, Կարլագինը հունիսի 24-ին, առավոտյան անցնում է Շահ-Բուլաղ գետակը, բայց այստեղ նրան շրջապատում են պարսկական առաջապահ զորախմբերը։ Սեղմվելով քառանկյունի պաշտպանության ձևով ու ետ մղերով թշնամու հեծելազորի հարձակումները, զորախմբը շարժվում էր առաջ և արդեն մոտենում էր Ասկարանի կիրճի մուտքին, երբ նրա առաջ անսպասելիորեն երեացին Փիր-Ղուլի-խանի գլխավոր ուժերը։

Ակնհայտ էր, որ պարսիկները արգեն հաստատվել են Ասկարանի ամրոցում, և Շուշու ճանապարհը կարված էր Կարլագինի վիճակը դարձավ վտանգավոր։

Շարունակել առաջրնթացը գետի խորքը, նշանակում էր կամավոր բնկնել թակարդը, հակառակորդը չէր հապաղի գրավելու կիրճի մուտքը, ու այդպիսով, կարգելակեր նահանջելու հնարավությունները թնում էր մի քանի հրայուր հեծելայներ, եթե նույնիսկ հաջողակ արդարություն ունի կավաքել ողջ Ղարաբաղում։ Կարլագինի համար բառացիորեն իրականացավ ոռուսական ասացվածքը։ «աղուհացը ետ գցիր, իսկ այն կհայտնի առջեկում»։

Մենք արգեն գիտենք, որ Կարլագինին իր ժամանակին հայ լուզացի Հարություն Աթաբեկովի բնտանիքը փրկել էր քայլայումից։ Ել ահա, այդ Հարությունի երիտասարդ որդի Վանի-Ղուզբաշին յղված Կարլագինի նկատմամբ ունեցած իր անսահման երախտագիտության զգացմունքից, թողնում է իր բնտանիքն ու կամավոր մրտնում նրա զորախմբի մեջ, և այդ պահից, բառիս բուն իմաստով, գառնում է զորախմբի փրկիչը։ Այդ ժամանակից սկսվում է Վանի գործունյա գերը։

Հավ գիտենալով ողջ շրջակալքը, նա առաջինը Կարլագինին ցույց տվեց քիչ հեռվում երեացող բարձր բլուրը, որի վրա փուլած էր մահմեղական բնդամանոցը Հայտնի՝ Ղարա-Ղաջի-

Բարա անունով, և պոաջարկեց այնտեղ պաշտպանվել: Տեղի իսկապես ամուր էր, Կարյագինը արագ շրջվեց դեպի գերեզմանոցը ու ամրացավ այնտեղ: Պարսիկները քաջալերկելով զորախմբի փոքրությունից, աշանց հապաղման, արագ անցան հարձակման: Նրանց կատարի հարձակումները հաջորդում էին մեկը մյուսին մինչեւ գիշերվա վրա հասնելու; Կարյագինը կարողացավ իր ձեռքում պահել գերեզմանոցը, բայց դրա համար նա հատուցեց Համարյա զորախմբի կեսով: Պետք է ենթադրել, որ պարսիկներին էլ էժան չնստեց՝ ոռւսներին բաց մարտում գերի վերցնելու իրենց փորձը:

Համենայն դեպս, հաջորդ հունիսի 25-ի օրն արդեն ֆիրմությանը բավարարվեց միայն Հրետանաձգությամբ, բայց գործը արագ վերջացնելու նպատակով նա մտածեց պաշտպաներին գրկել թրից, այդ նպատակի համար նա գետի վրա դրեց փոքր հրանոթներով չորս մարտկոցների: «Մենք Հայտնվեցինք ինչպես պաշտպան ամրացում, — գործը է ականատեսներից մեկը, — անտանելի տոթը Հյուծում էր մեր ուժերը, բայցն ու ծարավոր տանջում էին մեզ, իսկ մարտկոցներից կրակոցները չէին դադարում: Այդ բովելից սկսած զորախմբի կորուստները սկսեցին արագ աճել: Կարյագինը արդեն երեք անգամ կաթվածահարվեց կրծքից ու գլխից, իսկ հետո էլ գրնդակով վիրավորվեց կողքից, գումարտակի հրամանատար, հետապայում Ասյանդուղի ու Լենքորանի հերոս մայոր Կոտյարեսկին վիրավորվեց ուժից, իսկ սպաների մեծ մասը շարքից դուրս էին եկել, դեռ կովի առաջին օրը, Այս դրության մեջ անցավ ևս մի օր, բայց այդպես շարունակել առանց ջրի անհնար էր:

Հետո Կարյագինը վճռեց անել մի հանդուգն քայլ: Նա կանչեց Հարյուր եգերների, Հրամայեց պորուշիկ Լադինսկուն արագ գրոհով տիրել պարսկական մարտկոցներին, կամ ծայրահեղ դեպքում քշել Հայառակորդին գրաված դիրքերից: «Չեմ կարող առանց հոգու խանդաղատանքի հիշել, — հետագայում պատմում էր Լադինսկին, — թե ինչ Հրաշալի քայլել էին մեր զինվորները. Հարկ չկար իրափուսիու կամ ոգեսրել նրանց արիության, դրա համար էլ նրանց ուղղված իմ խոսքը մի քանի բառից էր բաղկացած, «գնանք, տղաներ, Ասոված մեզ հետ, հիշենք ասացվածքը. «Երկու մահ չի լինում, իսկ մեկից էլ չես խուսափի»: Ինքներդ էլ գիտեք, որ կովում մեռները ավելի լավ է, քան հոսպիտայում: Եվ սուրբ եկեղեցին մեզ համար կաղոթի, և Հարազատները կասեն, որ մենք մեռել ենք, ինչպես վայել

է ուղղափառին»: Բոլորս խաչակնքեցինք: Մենք կալծակի արագությամբ վագեցինք ճամբարից մինչեւ գետակը, և ինչպես առյօւծներ ծան ծաղուտով նետվեցինք ուղիղ Հակառակորդի մարտկոցի վրա: Միքանի ակնթարթ հետո դրանցից առաջինը մերս էր, իսկ այնտեղ եղած պարսիկները բնկան մեր սվիններից: Ժամանակ հարամայեցի «առաջ» և ոչ մարտկոցում եղածներին ուշքի գալու, ես Հարամայեցի «առաջ» է ոչ ոք Հասցը մի կրկին, բոլոր բնկան մեր սվիններից: Երրորդ մարտկոցի գրավումը երկար չտեղեց, իսկ չորրորդը մեղ Հասակ առանց ջանքերի, պարսիկները թողնում էին իրենց հրանոթներն ու փախչում:

Այդպիսով, 15 հրանոթները, որոնք մեզ մեծ վնաս էին պատճառում, կես ժամից էլ պակաս ժամանակամիջոցում՝ առանց որևէ կորուստի մերը դարձան: Ոչնչացնելով մարտկոցը, ես իմ գրաված Հրանոթներով վերադարձա զորագունդ գույթի համար կամ առաջարկեալ էին, շնորհավորեցին ինձ ու իմ խիզախ զինակիցներին, ու մեր պատմին դոչում էին «Ուռառ»:

Մենք Հասցիվ Հասցը էլ ինք խաղաղվել, երբ լուր ստացվեց, թե Փիրմության օգնության է հասել Արբաս-Միրզայի ողջ 30 Հայութիւնութիւնին օգնության մեր գումարտակի աշեխնելի միջակը, զարանոց բանակը: Տեսնելով մեր գումարտակի աշեխնելի միջակը, վանին այդ ժամանակ Հանձն առավ կարյագինի նամակը Շուշի Հասցնել, Հուսալով, որ Լիսանելիշը այնտեղից մեզ որևէ օգնություն հաւաքնել, հուսալով, որ Լիսանելիշը այնտեղից մեզ որևէ օգնություն կատա: Նա գուրս եկավ գիշերը, ամեն քայլափոխի իր կրանքը վտանգի ենթարկելով, զգուշությամբ անցավ պարսկական և պահակների մուսով ու վերջապես հասակ հայկական Մթամորթ գյուղը: Այստեղ նա հանդիպեց մելիք Աղամայնին (Քարաբերդցի մելիք Մեծլումի որդուն), Ասրիբեկ-Փիրությունին և ուրիշ Հայերի, որոնք հեռավոր բարձունք սրբիրեկ-Փիրությունին են ուրիշ Հայերի, որոնք հեռավոր բարձունք քից, սրբի եղեքություն դիտում էին մի բուռ քրիստոնյաների կոփիր բազմաթիվ պարսիկների հետ: Վանին ծրաբը Հանձնում է Քյաթուկի պատմաթիվ պարսիկների Հասց: Եվ վանին ծրաբը Հանձնում է ինդրում էլ շատապ հասդնել Շուշի, այվագի եղբայրը Մելքոնին և ինդրում էլ շատապ հասդնել Շուշի, նույնիսկ Նրան նվիրում է 10 կոտ զորեն: Իսկ ինքը կանխագույն ուղարկելու որիր օգնությունը պետք կլինի ուղարկեալ գումարտակին հենց նույն ճանապարհով վերադառնում է կարյագինի մոտ:

Եվ վանին չէր սխալվել երկու օր անընդհատ Արբաս-Միրզան շաբունակում էր Հարձակում-Հարձակումի հետեւից, և շնայած բոլոր գրուները ետ էին մղվել, բայց թշնամուն դիմադրելու համար պաշարվածներին էլ ոչ մի միջինդ շէր մնացել:

Լիսանելիշը Հասկացնել էր տվել, որ ինքը Շուշիից դուրս գալու ոչ մի Հասարավորություն չունի, իսկ մեզ մոտ, վիրավորներին շրջացած, կար Հազիկ 150 զինված մարտ: № 10802  
17



Հետիոտն զինվորները մոտակա անտառում կանգնած էին պահեստի գորամասեր: Ալգարացի մթնաշաղում, մաքուր երկնքի վրա պարզ գծագրվում էր աշտարակից-աշտարակ քայլող պահակների ստվերները, սակայն ամրոցի ներսում՝ ամեն ինչ լուր էր ու հանդիսատի: Կայալորն այս կողմից հարձակման չսպասելով քնած էր առավոտայն խորք քնով: «Դանդաղել, առավել ես տառանվել չէր կարելի» գին-փորները հրանոթները մոտեցրին դարպասներին ու ավեցին կրակահներթ: Դարպասները փլվեցին ու զորախումբը բացվածքից ներս խուժեց ամրոցը: Սարսահիր տիրեց պարսիկներին:

Կայազորը դիմեց փախուստի, թողնելով տեղում երեսունից ավելի սպանվածների, որոնց թվում՝ երկու խան: Սպանված էր նաև իֆիալ-խանը, որի դիակը փախչողները թողել էին մեր ձեռքում: Անտառում կանգնած պարական պահեստի զորքը նույնպես խուժապի մատնվեց և օդնություն ցույց չտվեց:

«Բերդը իմ կողմից վերցված է, հակառակորդը նրանից վորնդված է, - զեկուցեց զարյագինը համառոտ, - սպասում են ձերդ պայծառափայլության կարգադրությանը»:

Դեռ երկու ժամ՝ լուսական բանակը երեւաց Շահ-Բուլաղի մոտերքում, իսկ հետո Արքաւ-Միրզան փորձ արեց բաց ճակատամարտով նորից տիրել ամրոցին:

Գրոհը ետ մղվեց, պարսիկները շրջապատելով Շահ-Բուլաղը, սկսեցին ամուր պաշարումք:

Զորագունդը բերդի ամուր ու բարձր պատերի ետևում կարող էր իրեն պարսկական հրետանու աղդ եցու թյունից ապահով դդայ՝ սակայն նրան սպասում էր մի ալլ, ավելի վատանգավոր թշնամի՝ քաղցր, որի դեմ անգոր էին ամենաարի զորքերը: Զորագոնդում պարեն չկար, այն չպահեց նաև կարյագինի կողմից վերցրած ամրոցում: Պարսիկներից խլված մի քանի ձիերի միար շուտով սպասվեց:

Վրա հասավ սովոր: «Այդ սարսաւելի ծայրահեղ պահին, - հետագայում պատմում է Հարդինսկին, - մեր իսկական բարերարը, որի անունը պիտի անմոռաց մնա կարյագինի զորախմբում եղածներիս բոլորիս համար՝ մեր հավատարիմ յուղբաշին, առաջարկեց մեզ համար ճարել որքան հնարավոր՝ նա հանձն առավ տեղեկացնելու իշխան Քիցիանովին մեր աներանելի վիճակի մասին»:

Օգավելով դրանից, կարյագինը Քիցիանովին գրեց, որ բացի Արքաւ-Միրզայից, անձամբ Բարա-խանի հրամանատարությամբ

Դարաբաղ է, մտել պարսկական գլխավոր բանակը և շարժվում է դեպի Ասկարան, և որ իր գորախումբը պարենի անբավականության հետեւ անքանքով գտնվում է խիստ ծայրահեղ վիճակում, որ զինվորները տեսանքով գտնվում են միայն կանաչով սորս օր է սնվում են միայն կանաչով և որ հիմա անզամ կանաչն չորս օր է սնվում են միայն կանաչով կամ են էլ հնարավոր չել ճարել, քանի որ պարսիկները ամեն տեղ դրել են պահակախումբը: «Եթե Ձերդ պայծառափայլություն, ավարտում էր նա իր նամակը, - շշապեք, ապա զորախումբը կկործանվի ոչ թե անձնատուր լինելով, որին չեմ դիմի մինչեւ արյան վերջին կաթիլու, այլ պարենի ծայրահեղ պակասից»: Սակայն այս սպառնալից ծայրահեղությունը եւ շտկեց որոշ շափով՝ դարձյալ նույն վանի-յուզբաշությունը, որը սրբությամբ կատարեց իրեն վերցրած բոլոր պարապությունները: «Սամանալով կարյագինի գրությունը, ես խնամքով թաքցրի այս գամաքի համար, որ կարող է պարսիկները ինձ բռնեն, - հետագայում պատմում էր վանին, - ու վճռեցի գնալ կուսապար գյուղը, Շահ-Բուլաղից 20 վերսաշահի հնառու, որտեղ ապրում էր Հայրս և որտեղ ես գիտեի կարելի է գտնել Հայերի կողմից թաքցրած հացը: Շահ-Բուլաղից ես գուրս եկա դիշերը ու բարեհաջող անցնելով պարսկական զորքերի միջով, վերցապես հասա իմ բնակավայրը: Գյուղում բնակիչներ շկային, բացի իմ հորից ու եղրորից իրենց բնտանիքներով, ու մի քանի ուանշպարներից, բոյորը թշնամու ահից փախել էին: Կ բաներ եղբորս, Հակոբին, արտակարգ խկամք ու համարձակ՝ կարյագինի նամակով իսկույն ուղարկեցի Ելիզավետպոլ, իսկ ինքս հորս հետ սկսեցի զորեն աշալ և մինչեւ Հաջորդ գիշեր թխեցի 40 մեծ հացեր, վերցրի սխտոր ու այլ բանջարեղեն և յուսագետին ալլ ամենը հասցրի Շահ-Բուլաղի: Կ արյագինը ու կոտյարեսկին այս շնչին պաշարը բաժանեցին զինվորների մեջ, իրենց էլ վերցրին ամենքին հավասար բաժին: Առաջին Հաջորդ փորձը դրդեց կարյագինին հաջորդ օրը ինձ հետ ուղարկել մեկ սպայի ու 50 զինվորի, որպեսզի պարենի ավելի մեծ պաշար բերենք:

Մենք բերդից գուրս եկանք գիշերը բարեհաջող ու գողունի անցանք մեզ շրջապատողների մուտով, նրանց կողմից մնացինք աննըկատ, և արդեն պարսկական ճամբարից բավական հեռու մենք հանձնիքիցնք հեծյալ պարեներիք: Նրանք մինչեւ վերջինը՝ ոչնչացվեցին, այնպես, որ ոչ մի մարդու շնչողով վերկվել և անմիջապես արյունը ծածկեցինք հողով, սպանվածների դիակների քայլիքինք ձորը, ծածկեցինք քարերով ու թիկերով: Դա մենք արեցինք նրա համար, որ թաքցնենք մեր ուղղությունը և որպեսզի, եթե հաջորդ օրը պարսիկները նոր պահակախումբ ուղարկեն կորածներին որոներու հայրը, մեր գատառտանի հետքը շպանեն: Լուսաղ եմին մենք ար-

դեն կ ուսապատում էինք: Հայրս մինչ այդ ժամանակը աղացել էր մնացած զորենը, նրանից հաց թխեցինք, կերակրեցինք զինվորներին, վերցնելով մնացածը ուղղվեցինք Զերմուկ ամրոցի ավերակները, որտեղ, ինչպես իմացա թաքնվում էին մեր Հայերը: Հորիցս վերցրուած 60 թումանով Զերմուկում ես գնեցի 12 գուշի եղթերավոր առանսուն, իսկ գյուղերում գտա մի քիչ գինի, մրգեր, մածուն, բանջարեղեն, երկու կաթսա, այդ ամենը բարձեցինք եզների վրա ու գիշերը նորից Հաջողությամբ վերադարձանք բերդ»:

Իսկ մինչեւ այդ Աբբաս-Միրզան ձգտելով կարյագինի զորախրմբի հետ արագ վերջացնել հաշիվը, առաջարկում է նրան պատվով Հանձնվել: Կարյագինը ժամանակ շահելու նպատակով պատասխանում է, թե բնդունում է պայմանները, սակայն պետք է համաձայնվի գլխավոր Հրամանատարի հետ: Աբբաս-Միրզան գիտենայով, որ Ցիցիանովի ձեռքի տակ զորքեր չկան, որպեսզի փրկեն կարյագինին, համաձայնվեց չորս օր սպասել, և նույնիսկ զորագնդի այդ ժամանակվա պարենավորմը իր վրա վերցրեց: Նշանակված ժամկետը վերջացավ, և Աբբաս-Միրզան Հանձնվելու մասին պահանջեց դրական պատասխան:

Ես համաձայն եմ, պատասխանեց կարյագինը, թող նորին գերազանցությունը վաղ առավոտից գրավի Շահ-Բուլաղը: Եվ կարյագինը, կատարեց իր խոստումը: Իր վիճակից դուրս գայու ուրիշ ելք չգտնելով նա այնուամենայնիվ վճռեց չհանձնվել, այլ մի անգամ էլ դիմել գիշերային նահանջի: Բայց ուր գնայ: Մեծ ճանապարհով Ելիզավետպոլ գնայ անիմաւոտ էր, քանի որ զորախումբը իսկուն կհայտնաբերվեր և կպաշարվեր Հարթավայրում, որը պաշտպանվելու ոչ մի հնար չէր տա:

Հետեաբար, Վանու խորհուրդով կարյագինը րնտրեց Շահ-Բուլաղից 25 վերստի վրա, լեռներում գտնվող երբեմնի ջրաբերդի մեր-Ադամին պատկանող ոչ մեծ՝ Մոխրաթաղ քարե ամրոցը:

Հուլիսի 7-ին, գիշերվա ժամը 10-ին զորախումբը անադմուկ դուրս եկավ Շահ-Բուլաղից, և Վանին նրան նորից տարավ այնպիսի աննկառի արաւետներով ու ձորերով, որ հակառակորդը երկար ժամանակ մեր հեռանալը չէր նկատել: Ամրոցի պատերի վրա թողնվեցին ժամապահներ, որոնք իրենց գոյզումներով պարսիկներին շփոթմունքի մեջ էին գցում, Երբ զորախումբը բարեհաջող արդեն անցել էր շրջապատման գոտին, Վանին մենակ վերադարձավ ամրոց, վերցրեց պահակներին ու նրանց բարեհաջող հասցրեց գորախմբին:

«Հազիվ էինք մենք, հասցրել միանալ, - պատմում է վանին, - երբ նորից հանդիպեցինք հեծլալ պարեկների, որոնք գնացին ու ճամբարում տագնապ բարձրացրին: Բայց պարսիկները մեզ հասնել չէին կարող, քանի որ չգիտեին, որ ճանապարհով ենք գնացել: Ճանապարհին մեզ հանդիպեց առու, որով Հրանոթները անցկացնել անկարելի կամուրջ սարքելու համար անտառանը բարձր չկար: Չորս գինվորներ կամավոր կանձն առան պառկել առվում, նրանց վրայով անց կագրինք Հրանոթները, նրանցից երկուսը մահացան, իսկ երկուսը կենդանի մնացին\*:

Մի քանի ժամ անց մենք հասանք կուսապատ ու տեղափորվեցինք այգիներում, իսկ կոտյարեսկին բոյոր վիրափորների հետ շարժվեց առաջ, դեպի Մոխրաթաղ, որը բնկած էր այստեղից հինգ վերստ հյուսիս-արևմուտք: Ի դեպ, Աբբաս-Միրզան մեզ հասավ կոտյարեսկում: Սկսվեց համառ մարտ, և պարսիկները համարյա թե տիրելու էին մեր Հրանոթներին, բայց ուռւսները այն ետ խեցին սվինամարտով: Բարեբախտաբար: Մոխրաթաղը այս ժամանակ կոտյարեսկու կողմից արդեն գրավված էր և կարյագինը տեսնելով որ այգիներում հնարավոր չի լինի պաշտպանվել այլևս, սկսեց նահանջել՝ ամեն մի քայլում կռվելով պարսիկների հետ:

Կարյագինը ամրոց հասնելով առանց հապաղումի ուղարկում է Աբբաս-Միրզայի նամակին պատասխան, որը ստացել էր դեռ Շահ-Բուլաղում. «Ձեր նամակում Դուքք բարեհաճել եք ասել, - գրում է Կարյագինը թագաֆառանդին, - որ Ձեր ծնողը իմ հանդեպ բարեհաճէ, իսկ ես պատիվ ունեմ հայտնելու, որ կռվելով հակառակորդի հետ, նրանից ողորմություն չեն սպասում, բացի դավաճաններից, իսկ ես, գենքի տակ սպատակածս, երջանկությանս համար գերադասում են

\* Դա 17-րդ եղերյան՝ ներկայումս Երեանյան գնդի շարքային Գավրիլի Սիդորովի հայտնի սիրագործությունն էր: Հադիսնեկին այդ մասին ավելի մանրամասնությամբ էր պառմում, բայց հետաքրքիր է, որ ինքը՝ կարյագինը իր զեկուցման մեջ այս մասին չի հիշատակում ոչ մի խոսքով:

Հնարավոր է, որ նրա ոռւսական գենքի պատիվը փրկելու համար զինվորների կողմից արված մի ամբողջ շարք գոհաբերությունների ականատեսի համար այդ սիրագործությունը իրենից չի ներկայացրել բացառիկ մի բան, և նա մոռացել է դրա մասին ամբողջովին կյանված լինելով իրեն վստահված զորախմբի ժամագրի հոգսերով:

արյունս թափել իմ կալսեր ծառայերու մեջ»:

Անտառների ու լեռների մեջ տեղավորված Մոխրաթաղի դեմ պարսկական հեծելազորի համար բավական գժվար էր գործելը և Կարլագինի գորախումբը այստեղ օգտվում էր Հարաբերական հանդրսությունից: Վանին ամեն գիշեր գուրս էր գալիս ամրոցից ու շրջակա հայկական գյուղերից պարեն բերում:

Արքաս-Միրզան չհասցնելով Կարլագինին պահել իր ձեռքում, Հեռացագ Ասկարանի կողմբ, իսկ ոռւսներին հսկելու համար լեռներում մնաց երկուհազարանոց գորախումբ:

Ալլդ ժամանակ Ելիզավետպոլից Մոխրաթաղ հասագ Վանու եղբայրը՝ Հակոբը և իր հետ բերեց Յիշիանովի Հրամանը՝ «մնալ ամրոցում մինչեւ իր ժամանելը»: «Ալլդ պահցից, պատմում էր Վանին, և ու Լարինսկին գիշեր-ցերեկ նստում էինք բլրակի վրա ու հրակում թարթառ գնակ ուղղությամբ ոռւսների երկալուն:

Շուտով հեռվում տեսանք նրանց շարասյունները:

Յիշիանովի կողմից ուղարկված մի հայ նրա Հրամանի հետ չառավ մեղ, «եթե Հնարավոր է, միանալ իր իմբի հետ Մարդակերտ գետի մոտ»: «Գիշերը ևս ոռւսներին դուրս բերի Մոխրաթաղից և երրորդ անգամ հաջորդությամբ անցկացրի պարսկական ողջ բանակի միջով: Լուսադ եմին մենք արդեն գլխավոր հրամանատարի ճամբարում էինք»:

Հանդիպումը հերոս գորախմբի մնացորդների հետ տմւնահանդիպավորն էր: Ամբողջ զորքը կանգնած էր «զգամտ» ու նրա երկալը ողջունեցին բարձրագոյն ուռուայով»:

Յիշիանովի բոլորի առջեւ գրկեց ու համբուրեց Կարլագինին ու խույարկեսկունք, շնորհավորեց բոլոր սպաներին ու զինվորներին, և խոստացավ թագավորին զեկուցել գորախմբի Հրաշալի խիզախումբուների մասին ու ամենքի Համար երաշխալորել պարգևատրում: Հանուն նա հասուկ շնորհակալություն հայտնեց ու հիշատակի Համար նվիրեց իր արծաթթյա մեծ ժամացույցը, որի մինչեւ օրս պահպում է նրա ժառանգների մոտ:

Հաջորդ օրը Յիշիանովի շարժմեց դեպի Շուշի, իսկ Կարլագինի գորախմբը ուղարկվեց Ելիզավետպոլ, որը մնացել էր Համարյան տուանց զորքի: Պետք է շտապել, որպեսզի ասպատամբ թաթարներին

Հնարավորություն չտան Հարձակվելու բուն քաղաքի վրա, և Վանին, որին այս անգամ արդեն ուղեկցում էին իր հավաքած զինված զաթ-սուն դարաբաղցի Հայերը, նորից առաջնորդեց զորախմբին կարճ ճանապարհով ու բարձր լեռներով:

Այս արշավանքում դա եղագ ոռւսներին մատուցած նրա վերջին ծառայությունը: Կարճ ճանապարհի բնորությունը դուրս ե-կավ շատ տեղին:

Հաղիվ էինք Հասել Ելիզավետպոլ, երբ լուր ստացվեց թե Արքան Միրզան կողքից շրջանցելով Յիշիանովին «ամբողջ ուժերով շարժ-վում է Գանձակի վրա: Հիվանդ ու վիրավորված Կարլագինը՝ ինքը բնդառագ երագ նրան և հույսի 27-ին Զիդամի մատուցներում տե-ղի ունեցած մարտում 600 հոգուց չանցնող մեկ գնդի կողմից գրւ-խովին ջախճախովեց պարսկական բանակը:

Ալլդ չրված Հաղթանակի ուղմակարը եղագ՝ Հակառակորդի ողջ ճամբարը, գումակը, մի քանի Հրանոթներ, դրոշներ ու բազմա-թիվ ուղմագերիներ, որոնց մեջ էր նաև վրաց թագաժառանգը՝ Հե-րակլու հախստական որդի թեյմուրազը: Ալլդպիսին եղագ 1805 թր-վականին ավարտված պարսկական արշավանքի վերջաբանը:

Բայց հուզումները երկրամասում շանդարտվեցին, Վանիի ծառայությունները դեռ պետք էին գալիս և նա Ելիզավետպոլից տուն վերադարձավ միայն 1806 թվականի գարնանը:

Հրաժեշտ տալիս էր պարտաքինը իր պարտաքը Համարեց նրան տայու հետեւյալ վկայագիրը, որը մինչեւ այսօր պահպանվում է Աթաբեկով-ների բնուանիքում:

«Տրվում է սույնը Ելիզավետպոլի բնակիչ Հովհաննես յուզրա-շուն առ այն, որ նա, 1805 թվականին պարսիկների դեմ մղված ուղ-մական արշավի ժամանակ մշտակես մարտերում լինելով ինձ Հետ գերազանց խիզախություն է ցուցաբերել՝ հունիսի 24-ին և հետո ինձ վաստակված զորախմբի շորովրայ գրուների ընթացքում, որոնք մրդ-վել էին Բաբախանի որդի Արքաս-Միրզայի Հրամանատարության տակ գտնվող Հակառակորդի մեծաքանակ զորքերի դեմ Ասկարանի ամրոցի մոտ, Հետո եղել է ինձ Հետ ամրոցից նահանջելիս ու Հակառակորդի միջով անբնդ հատ ճեղքելիս, Ծահ-Քույաղ ամրոցին մոտե-նալիս և այն գրոհով վերցնելիս: Գտնվելով սույն ամրոցում, զո-րախմբումը շրջապա ուղարկված լինելով Հակառակորդով, շկարողանալով

պարեն ճարել, այնքան ուժեղ սովի մեջ էր, որ գործածում էր ձիռւ միս, նաև զովհաննես յուղբաշխն ելնելով միայն ջանասիրությունից ու նորին Կայսերական Մեծության ծառայության նկատմամբ ունեցած մութայնությունից ու եռանդից, հանձն առավ ձեռք բերել որոշ քանակությամբ հաց, անասուններ և սույն նպատակով խմբի հետ ուղարկել է գյուղերը: Առաջնորդելով նրանց այնտեղ ու վերադարձնելով առանց կորուստի, նա բերեց հաց, անասուն, որով զորավիգ եղավ սովից հյուծված զորախմբին: Հետո, երբ ես նորից հացի ուժեղ պակաս զգացի երազմաքանակ հակառակորդի պաշարումից վտանգ զգայով ու մարդկանց մրկելու համար ստիպված էին աննկատելի թողնել սույն ամրոցը, նահանջել ու որոնել ապահով ապատարան փոքրաթիվ եր կեսի չափ վիրավորներ ունեցող զորախմբի համար, նա առաջնորդ էլելով անսահման եռանդով ու ջանասիրությամբ, առանց տեսէ պարզ եի, կրկին հանձն առավ զորախմումբ առաջնորդել յեռներում զանվոր Մոփրաթաղ ամրոցը, և այն կատարեց յագագույն կերպով, անցնելով թշնամու համար անհասանելի ու դժվարամատելի տեղ, չունենալով ոչ մի ուղեկցող, տեղի դիրքը իմացող ոչ մի մարդ, վրա հասնող հակառակորդի կողմից զորախմումբ անխուսափելիորեն պիտի կործան վեր ճակատամարտում, որի մեջ յուղբաշխն նաև խիզախություն ցուցաբերեց: Վերջապես, այդ բերդում գտնվելով, ի լրումն նրա այս արտակարգ ջանասիրության դրսելումների, հացի պակասի առկայության դեպքում, ինքն էր տալիս առանց փողի, և դրանից հետո նորից զորախմումբը տարավ միացնելու նորին պայծառափայլության գլխավոր հրամանատար, ինժանուերիալի<sup>5</sup> պարոն գեներալ ասպետ, իշխան Յիշիանովի հրամանատարը ությունների, որը կատարել է յուղբաշխ զովհաններով՝ առանց ուրեմն պարզ եի, սակայն դեպի ծառայությունը ունեցած ջանասիրությամբ ու եռանդով միայն, անկեղծ պարտավորություն եմ զգում տալու նրան սույնը իմ ստորագրությամբ ու իմ զինանիշով կնիքի գրոշմումով:

Ի բարեբախտ բերդը Ելիզավետպոլ, 1-ին օրը մարտի 1806 ամի  
№40 : «Նորին Կայսերական Մեծության, Մեծ տիրակալի՝ անունից՝  
գնդապետ, 17-րդ Եգերյան գնդի շեֆ, Անալի 2-րդ աստիճանի ու

սր. Նահատակ և անպարտելի Գեորգիի 4-րդ դասի շքանշանակիր ասպետ Կարլացին»:

Իշխան Յիշիանովը նույնպես նշեց վանիի ծառայությունները հասուլ պարզ եռություն կամ գրում է այդ առիթով, «որ պահանջելով անսասան հավատարձություն ու նվիրվածություն, կամ, ավելի լավ է ասել՝ իրեն անվանելով իրենց անուններով, մեր զորախմբի փրկիչը, հայ յուղբաշում շնորհվեց պրապորչիկի կոչում», և դրանից էլ առավել, տրվեց պարանոցի ոսկե մեդալ ու նպատակարեն 200 ռուբլի՝ արծաթով»: Բայց այս ցուցմունքը ճիշտ չի: Բոլոր այս պարզ եները վանին ստացել է հետագայում՝ նոր ծառայությունների համար, իսկ այն ժամանակ իշխան Յիշիանովը սահմանափակվեց միայն նրանով, որ իրավունք տվեց վանուն ու իր եղբայր Հակոբին Ելիզավետպոլի գավառի Հասկանապատ գյուղից<sup>6</sup> 12 և Շաբիի խանությունից՝ 5 բնտանիք իրենց նախկին ռանչպարներին կուսապատ փոխադրելու և որոնք հաստատվեցին եղբայրների անունով խանական թալաղով:

Ավելի ուշ, արդեն 1815 թվականին թափչեի հատուկ միջնորդությամբ Հակոբին շնորհվել է նաև արծաթյա մեդալ, որն ուղարկվել է նրան գլխավոր հրամանատարի հետեւյալ կից նամակով:

«Ղարաբաղի բնակիչ Հակոբ Հարությունովին»\*: «Եներայմայոր, առաքեա Հախիվերդովի վկայությունը Զեր ծառայության նրկանասիրության և թուսասանին նվիրված լինելու մասին, որ ցուցաբերել եք շատ գեպքերում, երբ աջակցել եք ուստական փառք զորախմբին, որը եղել է զնդապետ Կարլացինի հրամանատարության տակ, բարեհաջող գուրս դալու ծանր վիճակից, որի մեջ զանվում էր այս փոքրիկ զորախմումը 1805 թվին պարսկական մեծաթիվ զորքերի գրոհումների ժամանակ և նրան Զեր սեփական միջոցներից հարկավոր շափով պարենավորելու բարձրագույնից ինձ շնորհված իշխանությամբ ես ճանաշեցի արդարաց, նորին կայսրական Մեծության, մեր Մեծ ու Ամենաբարեգույթ թագավոր կայսեր անունից պարտ եամբել Զեր արծաթյա մեղալով, պարանոցին նարմիք ժապավենով կրելու համար, որի վրա մի կող-

\* Այն ժամանակիա բարյոր պաշտոնական փաստաթղթերում է Հակոբը, և վանիի վկաբական Մեծության, մեր Մեծ ու Ամենաբարեգույթ թագավոր կայսեր անունից պարտ եամբել Զեր արծաթյա մեղալով, պարանոցին նարմիք ժապավենով կրելու համար, որի վրա մի կող-

մում պատկերված է Նորին Մեծության դիմանկարը, իսկ մյուս-  
սում՝ մակագրություն՝ «Հավատարձության համար»: Հզեսվ որ-  
րան կից նշված մեղալը, ևս յիշանույթ ևմ մնում, որ Դուք քաջա-  
լերվելով նման պարգևով՝ կյանաք անձնվիրարար ու տուալել ե-  
ռանդով ծառայել նորին Կայսերական Մեծությանը:

Այսուհանդեմ մնում եմ Զեր իսկական բարիացակամ:

«Նորին Կայսերական Մեծության, իմ Ամենաբարեկության մա-  
կագրի անունից, ինֆանտերիալի գեներալ, Վրաստանում ու Կավ-  
կասյան գծում տեղափորված զորքերի գլխավոր հրամանատար,  
Աստրախանի նահանգի, Կովկասի ու Վրաստանի քաղաքացիական և  
սահմանային զորձերի գլխավոր կառավարիչ, Կասպիական սատրա-  
կան նավատորմի հրամանատար, որ. Ալիքսանդր Նեսկու, որ. Ան-  
նայի առաջին տափածանի, որ. Մեծ Նահանակ ու Հաղթական Գեոր-  
գիի 4-րդ կարգի, «Հերոսության համար» մակագրությամբ սովոր-  
թուր կրող, և պարսկական՝ ալմատավ զարդարված Ալքեի ու Ան-  
դրուժի» առաջին տափածանի շքանշանի ասպետ՝ Նիկոլայ Աստիշչի:

Քաղաք Թիֆլիս, 4-ին մայիսի 1815 ամի Ն 425:

1806 թվականի սկիզբը Կովկասի տարեգրության մեջ նշված  
է սպրեկալան իրադարձությամբ, որը ունեցել է անհերքելի ազդ և-  
ցություն Կովկասյան մեր զորձերի ամրազց բնթացքի վրա: Դա  
Բարից բերդի պարիսպների տակ իշխան Յիշխանովի ու խաղաց ըստ Ժ  
սպանությունն էր: Այս դեպքի մասին առաջին խել լուրը սատրա-  
տիս Երկրամասում մաքրված խոսվարար տարբեր, որոնք զուգում մ  
էին Յիշխանովի անսասան կամքով ու հմուտ ձեռքով, միանդամից  
գրությարձագրին:

Եմերեթիալի թագավոր Սուլունը առաջինը պահանջեց, որ  
սուսական զորքերը թողնեն Քայլախը, Երեանի խանը պատրաստ-  
վում էր ևս խլել Շորագյալի շրջանը, պարսկական զորքերը մոռեց-  
վեցին Ղարաբաղի սահմաններին: Ղարաբաղի տիրակալ Իրրահիմ-  
շանը դափաճանություն էր նյութում և զաղանի բանակցություն  
էր վարում Արքաս-Միթրպայի հետ, խոստանալով հանձնել Շուշին  
ու նրա ձեռքը մատնել այնտեղ տեղափորված Լիսանի իշի զորագուն-  
դր: Բարեկախտարար, դավագրությունը հայտնարերվեց ժամա-  
նակին և արդեն պարսկական հեծերագործն միանալու պատրաստ  
Իրրահիմ-խանը սպանվեց Լիսանի իշի կողմից: Բայց պարսկական

զորքը արդեն մտել էր Ղարաբաղ, ու պարսկական հրոսակախմբերին  
կանգնեցնելու համար մեր կողմից պահանջվեց ուժեղ յարում:

Ելիզավետպուլմ կանգնած փոքր զորախումբը գեներալ Նե-  
րոլսինի բնդհանուր հրամանատարությամբ, արագացված քայլքով  
շարժվեց դեպի Շուշի, Աբրաս-Միթրպայի 20 հազարանոց բանակին  
բնդառաջ: Զորախմբում, գնդապետ Կարյագինի հրամանատարու-  
թյամբ կար և եգերյան մի զորամաս, այստեղ էր գտնվում նաև  
վանի-յուղաշին, որը վերստին եկել էր կամավոր: Կովկասում  
ուռւսական դրոշակիր բարձրացնող առաջին առաջնորդների գործա-  
կիցը, ուռսական գեներալ փառքի խանդու պաշտպանը և մշտական ա-  
ջակիցը, նորից եկել էր ապացուցելու իր անշահախնդիր հավատար-  
մությունը ուռսական իշխանությանը: Ինչպես առաջ, հիմա էլ  
նրան ուղեկցում էր եղբայրը, Զակոր Աթաբեկովը:

Գործերը Ղարաբաղում վատ էին: Իրրահին-խանի սպանու-  
թյունը Ղարաբաղի բեկերի համար խոռվության ազդանշան դար-  
ձավ և նույնիսկ սպանված խանի բնտամների հավատար-  
մությունը բոլորի և ամեն մեկի համար կասկածելի էր դարձել: Ա-  
յսպիսի խառնաշփոթ պայմաններում խանության բնակիչներից  
ոչ չէր համարձակվում բացարձակ օգնություն ցույց տայ մեր  
փոքրաթիվ զորագնդին: Այդ ժամանակ Ղարաբաղի բնակիչներին  
համակած բնդ հանուր տրամադրությունից իր խիզախությամբ  
առանձնացնող Աթաբեկովների հավատարիմ բնտամնիքի ծառայու-  
թյունները մեզ համար առավել թանկ էին դառնում:

1806 թվականի հունիսի 8-ին Ներոլյսինի զորագունդը մոտե-  
ցավ Ասկարանի կիրճին, բայց այս անգամ՝ կանխապես Լիսանիշիի  
կողմից Ասկարանի ամրոցը գրավված էր և մեր զորքերը ամուր  
պատերի ետեւում կարող էին հանգստ գիշերել:

Հաջորդ օրը զորագունդը ամբողջ գումարկը թողեց ամբոցում  
ու թեթեացած շարժվեց դեպի Հանատին գետը<sup>7</sup>, որտեղ նրան բա-  
զատում էր պարսկական որդ բանակը:

Այստեղ հունիսի 13-ին տեղի ունեցավ արյունահեղ ճակատա-  
մարտ և Աբրաս-Միթրպան, գլխովին ջախջախված, ստիպված էր  
փախչել Ղարաբաղից: Պետք է ենթագրել, որ Վանի-յուղաշին այս  
մարտում ունեցել է աշքի բնկնող մասնակցություն, ինչպես այդ  
վկայում է կոմո Գուդովիչի կողմից նրան տրված հետեւյալ գո-  
վեստի դիբը:

«Տրվում է սույնը Ելիզավետպոլի հայ բնակիչներից Հովհաննես յուղացի Հարությունովին առ այն, որ նա գտնվելով գեներալ-մայոր և ասպետ Ներոյսինի գորախմբում, որր գործում էր պարսիկների դեմ, 1806 թվականի հունիսի 13-ի մարտում ցույց տվեց գերազանց քաջություն, որի համար նորին կայսերական Մեծության ամենախոնարհ հպատակիս ներկայացումով, Ամենաբարեկութր բարեհաճել է նրան տալ արծաթյա մեղայ՝ պարանոցին կարմիր ժապավենով կրելու համար, որի մի կողմում նորին Մեծության դիմանկարն է, իսկ մյուսում «քաջության համար» մակագրությունը, ուղարկելով սույնը մնում են հույսով, որ վեհագույն Միապետի այսպիսի առատաձեռնությունը կնպաստի դեպի նորին Կայսերական Մեծությանը ուն եցած ծառայությունը դարձնելու ջանակը, առավել խորիմաստ»:

«Նորին Կայսերական Մեծության Ամենաբարեկութիմ արքային անունից կովկասյան գծի, Վրաստանի ու Գաղոստանի գորքերի գլխավոր Հրամանատար գեներալ-փոխմարշալ, Աստրախանի նահանգի, Կովկասի ու Վրաստանի քաղաքացիական գործերի կառավարիչ, և ուստական բոլոր շքանշանների առաջնորդությունը գործությունը»:

Իրարեբախտ քաղաքն թիֆլիս, 4-րդ օրը մարտի, 1808 ամի № 489:

Վանի-յուղացու հետագա գործունեությունը, որը բնդ գրրելում է Անդրկովկասում մեր տիրապետության հաստատման ողջ առաջին շրջանը, պակաս հարգ ված չի եղել; Ինչպես այդ մասին վկայում են գնդապետ Ասսեկի ու փոխգնդապետ Մնակսարեկի (որոնք Ղարաբաղում եղած զորքերի հրամանատարներ էին) կողմից նրան արված վկայագրերը:

Ղարաբաղը գտնվելով հենց գեղի Վրաստան պարսիկների ներխուում ուղու վրա, երկու հարեան պետությունների՝ Արեւելիք և Հյուսիսի համար բնդ հարումների մշտական թատերաբեմ է եղել; Եվ ուսւների համար այդ երկրի ձեռք բերումը ու պահպանումը իր ձեռքերում է ժան չի եղել; Վանի Աթարեկովի գործունեության մասին, շատ շերկարացներու նպատակով, բերենք երկու վկայագրերի ընագորերը, որոնցում վառ գծերով նկարագրվ ում են Վանի-յուղացու կողմից ցույց տրված ծառայությունները:

Աչա այդ վկայագրերից առաջինը՝ տրված նրան 1811 թվակա-

նի Հովհաննես:

«Սույնը արքում է Ղարաբաղի տիրութի հայերից յուղացի Հովհաննեսին առ մասին, որ նա ինչպես ինձ նախորդող գնդապետ Կարյագինի, նույնպես և մինչ իմ գալր այս պաշտոնը գրավող հրամանատար դնդապետ Լիսանելիցի ժամանակ (որը հիմա գեներալ-մայոր է ու եգերյան 9-րդ գնդի պետը), նմանապես Կոտյառեկու, իսկ հետո սկսած 1807 թից մինչեւ սույն 1811 թվականը իր հրամանատարության տակ եղած ժամանակ, թագավոր Կայսերը ծառայելիս նրա վրա դրված բոլոր հանձնարությունները նա կատարել է գերապանց փութացնությամբ ու եռանդով, ինչպես վայել է Հավատարիմ՝ Հպատակին: Բազմից իր ենթականերին ուղարկել է Պարսկաստան իմանալու հակառակորդի բոլոր մտադրությունների, մահափորձերի մասին, և այդպիսով, նա ինձ համար բերել է ստույգ տեղեկություններ: Իսկ գյուղավորապես նա օժանդակում էր ամենավտանգավոր ժամանակներում, Հրամանատարությանը և նրանցից ինձ գրությունների հղմանը, քանի որ հաստատված պահակակետերում ամառ ժամանակ հաճախ այդ պահակակետերում նշանակված թաթարները տեղեկանալով հակառակորդի զորքերի մոռենայում մասին փախչում, ցրվում էին այնպես, որ ամսից ավելի ժամանակում էլ նրանց ետ պահանջել հնարավոր շէր լինում, իսկ նա, յուղացի Հովհաննեսը, ունենալով մյուսներից տարրերվելու ձգուում, Պոստային ողջ ծառայությունը կատարում էր միայն իր ենթականերով առանց որեէ հատուցման և բազմիցս նրանց շատ կարեռ հաղորդումներով Ելիզավետպոլ է ուղարկել որպես բանագնաց, և ինչպես ինձ հայտնի է նա այդ գործերի վրա ծախսել է բավականին քանակով իր սեփական փողերը: Դրա համար, արգեն փորձով ապացուցված, նման ջանահրությունը ես պարտավոր եմ անկողմնապահորեն բացապերել ու երաշխավորել վերադաս Հրամանատարության առաջ, որ նա՝ Հովհաննես յուղացին այս գեպում արժանի է միապետի պարզեցն և ի հարգանս դրա տրդպում է սույնը իմ ստորագրությամբ ու իմ կնիքի գինանիշի գրոշմումով»:

Ղարաբաղի տիրութի ի բարեբախտ բերդը Շուշի, Հունիսի 16-րդ օր 1811 ամի:

Գնդապետ Ասսեհ»:

Երկրորդ վկայագիրը.

«Տրվում է սույնը Հայերից Հարգելի Յուզբաշի-Հովհաննեսին այն մասին, որ 17-րդ եղերյան գնդի Հրամանատար եղածս ժամանակ, ես Նկատեցի նրա մեջ Ծուսաստանի Նկատմամբ իսկական Համակրություն։ Դրանից էլ առավել նրա վրա իմ կողմից դրված բոյոր Հանձնարարությունները կատարում էր առանձնահատուկ փութեղությամբ, և Հաճախ էլ իր ենթականներին ուղարկել պարսկական սահմանը, որպես լրտեսներ, բնդ որում, Թարթառի պահականում պահանջվող քանակով կազակներ ու թաթարներ չունենալով՝ Հակառակորդից սպասվող վտանգի առաջն առնելու համար, նա զբաղվում էր պետական թղթակցությունները առաքելով, որ կատարում էր առանց որեւէ թերացման, որի համար ես կարող եմ արժանին հասուցել նրան՝ Հովհաննեսին, քանի որ նա արժանի է պատշաճ պարգևատրման, դրա համար էլ սույնը Հաստատում են իմ ստորագրությամբ ու 17-րդ եղերյան գնդի կնիքի դրաշմումով։

Տրված է ի բարեբախտ բերդը Շուշի, Ղարաբաղյան տիրություն, սեպտեմբերի 25-րդ օրը 1811 ամի, № 427։

Փոխգնդապետ Մնակասարեկ»։

Վրա հասավ, վերջապես հավերժ անմոռաց 1812 թվականը, երբ Նապոլեոնի արշավանքը ստիպեց կառավարությանը Կովկասից վերգրնելու մի քանի գնդեր, որպեսզի պաշտպանությունն ու դիմադրություննը արեմոյան սահմաններում ուժեղացնի, մնացած զորքերի փոքրաքանակ ուժերի արիությանն ու խիպախությանը թողնելով թուրքերից ու պարսիկներից հեռավոր Կովկասյան երկրամասի պաշտպանությունը, որն այդ ժամը ժամանակներում քիչ էր բենում իր վրա թուսաստանի ուշադրությունը։

Իսկ մինչ այդ պարսիկները ճարպիրեն օգտվեցին մեր ուժերի թուլացումից, ձմռանը 1812 թվի սկզբին մտան Ղարաբաղ։

Տրոիցելան գնդի գումարտակը, որն այն ժամանակ գտնվում էր Ղարաբաղի խանի Սուլթան-Բուրդ ձմեռային նստավայրում Հանկարծակի պարսկական բանակի Հարձակմանը ենթարկեցի գումարտակի հետ էր նաև ինքը՝ Ղարաբաղի Մեհման-Ղուլի-խանը և վանի-Լուզբաշին, որը շատ շուտ էր գգուշացրել գումարտակին սպառնացող վտանգի մասին։

Զինվորները ամբողջ օրը կատաղիորեն պաշտպանվեցին, բայց բնկավ նրանց Հրամանատար մայոր Զինին ու սպաների մեծ մասը, և երբ Հրամանատարությունը բնդ ունեց փոքրողի կապիտան Օլովյաշնիկովը, կենդանի ճնացած փոքրաթիվ սպաներից մեկը, զումարտակը տատանվեց։ Օլովյաշնիկովը պարսիկների հետ բանակցությունների մեջ մտավ։ Իզուր էր Մեհման-Ղուլի-խանը Համոզում նրան վստահել քաջ ու փորձառու վանիին ու Օգավելով գիշերից մթությունից նահանջել Շուշի։ Վանին ինքն էլ իզուր էր իր ծառայությունները առաջարկում, երդ վելով իր գլխով, որ զորամասը դուրս կրերի անվնաս։

Բայց Օլովյաշնիկովը արդեն շէր կարող ծանր հանգամանքների ճնշման տակ իրեն մեջ գտնել բարոյական ուժի բավական պաշտը, որպեսզի այդպիսի հանգույզն սիրանքի վճիռ բնդ ուներ։ Նա պահանջեց, որ երկուսը՝ և խանը, և վանին հեռանան գումարտակից, և որ ինքը ինքը գիտի, թե իրեն ինչ է հարկավոր աներ։

Աղետը անխուսափելի էր, և խանին այլևս ոչինչ շէր մնում անելու, քան իր մի բուռ նորարներով փափշել Շուշի, որպեսզի Ալուսափեր պարսիկներին գերի բնկնելուց։ Վանին նույնպես Ճեռացավ զորագնդից, սակայն նա նեավեց Շահ-Բուրազ, որտեղ այդ ժամանակ գտնվում էր մայոր Իլյաշենկովի երկու վաշտերը, ուրանք Շուշուց ուղարկված էին Տրոիցելան զորագունդը արդեն գույն թյուն չուներ։ Իւսաբաղին Օլովյաշնիկովը բարձրացրել էր սպիտակ դրաշակ և զումարտակը զենքը վայր էր գրել, հակառակորդին հանձնելով թնդանոթներն ու գրոշակը։ Դա մժակ սուսակն դրոշն էր, որ իրենով զարդարում էր պարսկական շահի պատառ։

Վանին, ի գեպ, հասավ Շահ-Բուրազ, բայց այն զտավ արդ են պարսկական զորքի կողմից պաշտպանված։ Արանք առաջատար զորքերն էին, նրանց հետ էր նոր մեկ զավաճանած, Ղարաբաղի խանություն ժառանգորդը՝ Զաֆտր-Ղուլի-աղան, իսկ նրանցից հետո Ալուսան-Բուրդ էից այստեղ շատափեց նաև ինքը՝ Արբաս-Միրզան՝ զիփավոր ու ժերավ։ Իլյաշենկովի վիճակը զարձավ ծայրահեղ։ Բայց նաև շտատանվերով վստահեց վանուն, և համատարիմ հայր մի անգամ էլ զարձավ սուսակն զորագնդի փրկարարը։

Նա զիշերը վաշտերը դուրս բերեց պաշտպանված ամրոցից, տա-

բայի պարսկական պահակակետերի մուտք, յեզնային կածաններով, անցկացը եց ֆարուխ գյուղի միջով, որից այն կողմ սկսվում էր արդեն Շուշիի մեծ ճանապարհը։ Ալուել վանին Իլլաշենկոյին ցույց տայով Շուշի տանող կարծ ճանապարհը, ինքը միայն մեկ դիմուրի հետ շտապեց Խոջալու պահակակետը, որը այսուղից 20 վերստ հեռու էր, և որտեղ կանգնած էր 60 մարդուց կազմված մեր խումբը մեկ սպալի գյավորությամբ, վանին սրանց նույնպես տարավ ծածուկ ճանապարհով ու դուրս բերեց Շուշիի ճանապարհը ու բերդից 5 վերստ հեռու, Աղա-Քյորփի կամուրջի մոտ հասավ Իլլաշենկոյին։ Այդ ամենը կատարվեց այնքան արագ ու անաղմուկ, որ պարսիկները առավոտյան իրենց առջեւ գարմանքով նկատեցին դատարկված ամրոցը։ Հետապնդելու ըւշ էր։ Շուշին արդեն պատրաստվում էր պաշտպանության, և այդպիսով, պարսիկների առաջին հաջողությունը կազմակերծված էր։

Գոյություն ունի մի ուրիշ պատմություն ևս զրի առնված մերիք Վանու որդիներից մեկի խոսքերից, նա ասում էր, որ Վանին Սուլթան-Բուղեում չի եղել, այլ եղել է Իլլաշենկոյի հետ։ Վաշտերն արդեն դուրս էին եկել Շահ-Բուլյաղից ու գնում էին Զինիին Իգնության, երբ ճանապարհին հանդիպեցին սրարշավ եկաղ Քյաթուկ գյուղի ավագ Մելրումին։ Նա մի կողմ կանչեց Վանուն ու ասաց։ «Ուր ես գու տանում սրանց, զորագունդը ջախջախվել է ու հանձնվել, ես ուղիղ այնտեղից եմ գալիս»։ Վաշտերը ետ գարձան, բայց նոր էին նրանք մտել Շահ-Բուլյաղ, երբ նրանցից անմիշ ջապես հետո վրա հասավ պարսկական ողջ բանակը։

Զաֆար-Ղուլի-աղան մոտեցավ ամրոցին ու սկսեց կանչել որեւէ մեկին՝ բանակցության համար, վանին բարձրացավ ու կանգնեց պարիսպի վրա,

— Դու, յուզբաշի, նորից հայտնվեցիր ոռւսների մեջ, ու դարձացած հարցեք Զաֆարը։ — Հիմա Զեզ արդեն միկություն չկա։ Զինոնիի գումարտակը հանձնվել է, ամրոցը պաշտպանված է։ Որպեսզի վրկես մահից քեզ ու ոռւսներին՝ պիտի համոզես, որ կայագորք հանձնվի առանց կովի։

— Ինքը էլ այդ տեսնում են, որ փրկություն չկա, ու պատասխանում է վանին, ու դրա համար գործադրում եմ բոլոր ջանքերը, որպեսպի համոզեմ պետին վայր գնելու գենքը։

Զաֆարը գնում է, իսկ վանին սպասում է գիշերվան ու զորախումբը ծածուկ գուրս է բերում ամրոցից։ Պատմության հաջորդ մասը իր մեջ պարունակում է այն մանրամասնությունները, որը մեր կողմից հաղորդվեց վերեռում։

Այդ ժամանակ գյախավոր հրամանատարը, մարկիզ Պաուլուչչին գտնվում էր Ղուլյանում։ Մինչեւ հոգու խորքը վրդովված լինելով Օրովյաշնիկովի հանձնվելու առիթով, նա իսկույն սրարշավ մեկնում է Շուշի, ու իր առաջին զայրույթը թափում է խանի վրա, որին նա կասկածում էր դափաճանության մեջ։ Հանգամանքներն իսկապես, բայց երեսույթին, դասավորվում էին նրա դեմ։ Ծուսական գումարտակի խորտակումը նրա նստավայրում ու նրա փախուստը միայն իր նոքարներով, բավականին առիթ էին տալիս։ Նրան մեղադրելու, և խանին, թուսատանի հեռավոր նահանգները աջորելու վճիռը կայացված էր Պաուլուչչիի մտքում։ Խանը իր այգական Զաֆար-Ղուլի-աղայի տանը ենթարկվեց տնային բանտարկության, իսկ մինչեւ այդ Շուշի կանչվեց Վարանդայի մելիքների հին և հայտնի տոհմի ժառանգորդ՝ Զումշուդ Շահնազարովը՝ ուժեղ կամքի տեր, հայտնի իր խելքով ու խիզախությամբ, որը բազմից ցույց էր տվել Հակառակորդի հետ մղված կոփվներում։ Զումշուդը կրում էր ոռւսական բանակի գնդապետի աստիճան, մարկիզ Պաուլուչչին հենց նրան էլ մտադիր էր նշանակել Ղարաբաղի խանության կառավարիչ։ Բայց Զումշուդը կտրականապես մերժեց բնդունել այդ բարձր պատիվը և նույնիսկ ջանում էր միջնորդել խանի համար։

Հաջորդ օրը խանական դատական ատյանում հավաքվել էր ուղագմական խորհուրդը Մեծահի-Ղուլի-խանի բախտը որոշելու։ Ալուտեղ էր կանչված նաև Վանին՝ ցուցմունք տալու համար։ Պետք է նշել, որ դրանից քիչ առաջ Վանին գնացել էր Թիֆլիս խանի գեմը բողոքելու, որն ուղեցել էր Վանուց խելի նրա շինականներին, որա համար էլ նրանց փոխարքերությունները այնքան էլ բարեկամական չէին։

Կույլարեսկին, որն այդ ժամանակ պատահաբար գտնվելիս է, լինում Թիֆլիսում, Վանուն անձամբ ներկայացնում է մարկիզ Պաուլուչչին, և խանին հարկ եղած գիտողություն է արվում։

\* Վաշտոնաթող գնդապետ Յա.Դ. Լաղարեկի ձեռագրից։

Հիմա բավական էր Վանիի մի խոսքը, որ խորտակեր հակառակորդին, բայց Վանին շատ ազնիվ էր, որ օգտվեր նման զենքից, և այն հարցին թե «ոռքանով էր խանը մեղավոր գումարտակի կորստանի մեջ» - հարգալից պատասխանեց.

-Աւրդար- խանը ոչնչով մեղավոր չէ; նա ամեն ինչ արեց, որ փրկեր ուսւներին; Բայց նրան չլսեցին; Ինչ էր մնում նրան անելու; Եթե նա չփախչեր ճամբարից, ապա նա հիմա չէր լինի այսուեղ, այլ կլիներ պարսկական բանակատեղում:

- Ես գիտեմ, շարունակում է Վանին,- որ երեկ թիֆլիսից մեղ մոտ է եկել իշխան Վասիլի Բելըռութովիր և յուր է բերել, որ կախեթիայում ապստամբությունը է ծագել; Խանի հեռացումը ապստամբություն կարող է առաջ բերել նաև Ղարաբաղի թաթարների մեջ; Ավելի լավ է ամեն ինչ թողնել առաջվա նմաններ; Ծագմական խորհուրդը բնդունեց Վանու կարծիքը, և նրան էլ հանձնարարեց այդ մասին հայտնել Մեհմի-Ղուլի-խանին:

Վանին նրան գտավ սենյակներից մեկում գորգի վրա ծալապատիկ նստած ու խոր մտածմունքի մեջ զայլան ծխելիս; Տեսնելով ներս մտնողին, խանը բարձրացրեց գյուխը և հարցրեց նրան:

- Հայ, բարի՞ են արդյոք յուրերը:

- Բարի են, - պատասխանեց Վանին, ու նրան պատմեց այն ամենը, ինչ որ կատարվել էր խորհրդում:

Խանը խորապես գտացված էր:

- Ես ամեն ինչով պարտական եմ քեզ, - ասաց նաև՝ դու կլինես իմ ամենալավ բարեկամը և առանց քեզ մի կտոր հաց չեմ կտրի\*: Եվ նա իր խոսքի տերը եղավ, և մինչեւ իր կյանքի մերջը, իսկ նա մեռավ խոր ծերության հասակում, չէր գաղ արում Վանուն ցույց տալ ամենասրածարժար բարեկամության նշաններ:

Մինչեւ այդ Ղարաբաղում գանված զորքերի հրամանատար էր նշանակված գեներալ Կոտլյարեսկին, որի գալուն պես Աբրաստիրգան խելամիտ համարեց իր զորքերը ետ քաշել Արաքսի մլուս ափը; Ղարաբաղը մաքրված էր; Կոտլյարեսկին տեղում ծանոթա-

\* Այս ամբողջ պատմությունը գրի է առնված Մեհմի-Ղուլի-խանի ամենամտերիմ մարդու՝ Ասազբեկ թուստամբեկովի խոսքերից՝

նալով գործերի դրության հետ, և գիտենալով գնահատել ենթակաների ծառայությունները, ամենից առաջ ուշադրություն դարձրեց Վանու վրա և հատուկ երաշխավորեց մարկիզ Պաուլուչչիի առաջ; Այս թե ինչ էր գործ մարկիզը ուսզմական մինիստրին 1812 թվականի մարտի 17-ին իր №76 գրությամբ:

«Գեներալ մայոր Կոտլյարեսկին երաշխավորում ու ներկայացնում է ինձ դարաբաղցի պաշտոնյա Հովհաննես-յուզբաշի Հարությունովին, որը աչքի է բնկել իր ծառայության նկատմամբ ունեցած օրինակելի ջանասիրությամբ ու հակառակորդի դեմ՝ քաջությամբ»....., ապա շարադրելով մանրամասնությամբ Վանի յուզբաշը ընթերցողին արդեն հայտնի ծառայությունները Կարյադի զորախմբի փրկման գործում, նա շարունակում է. «Այն ժամանակից սկսած մինչեւ հիմա յուզբաշի Հովհաննեսը գտնվելով Ղարաբաղի զինվորական պետքերի հետ, նրանց կողմից միշտ օգտագործվել է նորին Կայսերական Մեծության ծառայության մեջ տարրեր առիթներով, և վերջապես անցաւ փետրվարին Տրոիցիան զորագնդի վրա պարսկական բազմաթիվ զորքերի հարձակման ժամանակ, երբ մայոր Իլյաշենկոյի հրամանատարությամբ Շուշուց օգնության ուղարկված 200 եգերների վրա հանապարհի կեսին հարձակվեցին 15 հազար պարտիկներ, այդ ժամանակ Հարությունովը գիշերը նրանց տարավ ծածուկ ճանապարհներով և առանց նույնիսկ փոքր կորուսի հասցրեց Շուշի; Որի համար տալով նրան իմ խորին երախառագիտունը՝ իր մատուցած գերազանց սիրանքների համար, ես իմ պարտիկներ համարում ինդրել Զեղ ամենախոնարհ հպատակությամբ, հայտնել Զեղ և Զեր միջոցով այդ մասին Նորին Կայսերական Մեծությանը և քաջալերման համոր երաշխավորել նրան Միավետին առատաձենությամբ ու ամենաբարեկթորեն պարզեցի աստիճանն»:

Այս պարզ էր ստացվեց նույն տարում, բայց նոր զիմավոր հրամանատարի օրոք, որը շտագեց ինքը հայտնել վանուն հետեւ թութով.

«Հարգելի զարաբաղցի Հովհաննես-յուզբաշի Հարությունով: Նորին ետք արտական Մեծությունը պարոն գեներալ-իետանանա, վրաստանում հրամանատար՝ մարկիզ Պաուլուչչիի ամենապատակ երաշխավորել նրան Միավետին առատաձենությամբ ունեցած Զեր զե-

թեզանց ջանքերի, հակառակորդի դեմ տարբեր պայմաններում հետուություններ ցուցաբերելու համար, սույն թվականի Հուլյանի 24-րդ օրը Ամենաբարեգությունը կամեցավ այդպիսի ծառայությունների համար որպես պարգև շնորհել Ձեզ պրապորչիկի կոչում, նրանակելով սույն կոչմանը համապատասխան՝ տարեկան 200 ռուբրի թոշակ։ Միապետի այս ուշադրությանը արժանանալու համար շրջնորհավորում եմ Ձեզ, մնում եմ լիիրավ Հուլյով, որ Դուք քայլերկերով այսպիսի պարգեռով կիանաք Նորին Կայսերական Մեծության համար ավելի եռանդով ծառայել։ Մնամ Ձեզ համար եռանդուն բարյացակամ։

«Նորին Կայսերական Մեծության, ամենաբարեգությունը իմ արքայի անունից՝ բանակի գեներալ-լեյտենանտ, Վրաստանում ու կովկասյան գծում տեղադրված զորքերի գլխավոր հրամանատար, Աստրախանի նահանգի, Կովկասյան ու Վրաստանի քաղաքացիական մասիու սահմանագծային վարչության պետ, Կասպիական ռազմական նախարարի հրամանատար, սր. Աննայի 1-ին աստիճանի, սր. Գեորգիի 4-րդ դասի ասպետ՝ Ծտիշչե։

«Ի քաղաքն թիֆիսի, նոյեմբերի 14-ի, 1812 ամի, № 358։»

Ծուսաստանի համար փառակոր, Պարսկաստանի համար ճակատագրակնն 1812 թվականը վերջացավ Կոտյարեսկուու երկու փայտուն հաղթանակներով, որոնք վերջնականապես կոտրեցին պարսկական շահի համառությունը, որը ոսւսական կայսրության հետ 9 տարի շարունակվող պայքար էր մղում։ Այսանդուզը և Լենքորանը նրա վերջնաբանն էին։

Պարսկաստանը խաղաղության դաշն կնքեց, ու Վրաստանին հարող մահմեդական խանությունները առհավետ միացվեցին Ծուսաստանին։ Այդ ժամանականից Անդրկովկասի համար սկսվեց ներքին քաղաքացիական զարգացման դարաշրջան և վանին իր եղբոր՝ Հակոբի հետ շատ բանով աջակցեցին Ղարաբաղի բարենորդմանը։

1814 թվականին նրանց տրված խանական թալաղից ի միջիայոց հայտնի է դառնում, որ վանին իր ջանքերով Զրաբերդի մահարում բնակեցնում է Դայկական գլուղեր, որտեղ պարսկական արշավանքների ժամանակ բոլորովին ոչնչացվել էին երկրամասում երբեմնի եղած քաղաքակրթության բոլոր հետքերը։

Ի հատուցումն այդ աշխատանքների և այն ծառայությունների, որոնք մատուցել էին Աթարեկովների բնտանիքը ոռւսական կառավարությանը, խանը նրանցից, պրապորչիկ Վանուն պարգեռում մելիքի կոչում, իսկ փոքրին՝ Հակոբ բեկին շնորհում է յուզբաշի, է մելիքի կոչում, իսկ փոքրին՝ Հակոբ բեկին շնորհում է յուզբաշի, կամ Հարյուրապետի կոչում։ Դրանով չքավարարվելով, խանը նրանց բանց առհավետ ժամանգական տիրապետությանը հանձնեց նրանց կողմից վերաբնակեցված գյուղերը, և բացի դրանից, հաստատեց Զրաբերդի ողջ մահալից ստացվող եկամուտներից առհավետ օգտրերի ողջունքը բացի խանական գանձարանը մանող փոստային վելու իրավունքը, բացի խանական գանձարանը մանող փոստային վելու ճանապարհային հարկերից։ Այս ամենի համար նրանցից յուրա քանչյուրին տրվեց հատուկ թալաղ։ «Իմ կառավարման ամրող քանչյուրին տրվեց հատուկ թալաղ։»

Այդ ժամանականից մինչեւ 1840 թվականի վերջը, մինչեւ երկրամասում նահանգային չիմնվելը, վանին որերի առաջական լիազու կառավարում էր Զրաբերդի մահալը, իսկ հետո՝ որպես պետ մելիք կառավարում էր Զրաբերդի մահալը, իսկ հետո՝ որպես պետ մահալի նախիր, նա որպես ժողովրդի ու կառավարության միջնորդ գարեն շգործադրեց տեղական բնակչությանը մոտենելու ուստական իշխանություններին։

Չի կարելի բարի շուքով չհիշել նրա մոտ որպես միրզա ծառայող, ոռւսերեն ու տեղական լեզունները իմացող Միրզա Ասրի-Զառաքարեկին, որը վանու ամբողջ երկարամյա գործունեության հարաբեկին, որը համար ու օգտակար ուղեկիցը եղավ։

Վանու համար բավականությամբ և Հարգանքով լի այսպիսի կանքը մեկ անգամ էլ բնդհատվում է, եթե մահմեդական խանուն կառավարող իշխան Մադաթօվիր Երմոլովից ստանում է թյունները կառավարող իշխան Հակոբ Վանին ջարասարանը։ Այդ 1819 թվականի օգոստոսին էր, և Մելիք Վանին մահացած իր հավաքած հայ հեծյալ ջոկատի գյուղիր, մահալի կառանցաւ իր հավաքած հայ հեծյալ ջոկատի գյուղիր, մահալի կառա-

վարումը և տնային գործերի վարումը Հանձնելով իր կրտսեր եղբորի՝ Հակոբ Առւզրաշուն:

Դժբախտաբար մեզ չեն հասել ոչ մի պաշտոնական տեղեկություն, բնանեկան ոչ մի վկայություն, որով հարավորություն ինքը դատել մելիք Վանու գործունեության մասին այս արշավանքում, և որպես հիշատակ, մնում է միայն Երմոլովի կողմից ստորագրված հետեւյալ վկայագիրը, որը պահպանվել է Աթարեկովների տուժմական թղթերում:

«Պարոն պրապորչիկ Հարությունովին: Թագավոր Կայուրը գնահատելով ծառայության նկատմամբ Զեր գերազանց ջանասիրությունը և լեզուիների ու կուշինցիների գեմ մղած կոխվներում ցուցաբերած արիության համար Ամենաողորմածը բարեհաճել է Զեր պարզեատրել սույն գրության հետ ուղեկցող «քաֆության համար» ոսկյա մեղալով, Գեորգեյան ժապավենով՝ պարանոցին կրելու համար: Ես հավատացած եմ, որ Դուք ստանալով միապետի այսպիսի բարեհաճ ուշադրությունը, կիրկնապատկեք Զեր ջանքերը նորին Կայսերական Մեծությանը ծառայելու համար:

Թիֆլիս, 28-րդ օրը գեկտեմբերի 1821 ամի № 4464:

«Նորին Կայսերական մեծության, Ամենաբարեգութ իմ թագավորի անունից ինֆանտերիայի գեներալ, Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, վրաստանի և Կովկասյան ու Աստրախանի նահանգի, սահմանագծային ու քաղաքացիական գործերի կառավարիչ, Կասպիական ռազմական նավատորմի հրամանատար, զանազան շքանշաների ասպեքտ Երմոլով»:

Սույն գրությունը Երմոլովը ուղարկեց իշխան Մադաթովի անունով, որը շքանշանի և Գեորգեյան ժապավենի հետ ուղարկելով մելիք Վանուն, գրում է նրան, որ ինքը մեծ բավականությամբ շնորհավորում է նրան Կայսերական ողորմածության համար և հուսով է, որ նա ապագայում էլ կծառայի այսպիսի ջանասիրությամբ ու հավատարմությամբ: Այս մեղայր ու նամակները լավագույն վկայություն են վանու խսկական ծառայությունների մասին, քանզի Ալեքսեյ Պետրովիչի ժամանակ քչերը կարող էին պարձենալ նման պարգևներով:

Հարաբերակում սկսված խաղաց կյանքը նպաստեց եղբայրների նյութական բարեկեցության բարձրացմանը, որոնցից Հակոբը հատ-

կապես աշխատ էր բնկնում անսովոր աշխատասիրությամբ ու տնտեսագրությամբ: Այս ժամանակներին է վերաբերվում բնտանեկան ավանդությունը այն մասին, որ պարսիկներից հալածված սրբազն պատրիարք ու ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմը, հարկադրված լինելով թողնելու կիմիածնի պատրիարքական գահը, ուսւների մոտ պաշտպանություն ու Հովանավորություն է փնտառում ու այցելում է Աթարեկովների բնանիքը կուսապատ գյուղում: Դառն է եղել այդ պատկառելի ծերունու կյանքը: Նա պատրիարքական գահին չըսավիրվեց 1808 թվին, մեծ կրքեր հանդուրժող Դանիելի վախճանից չետո, այն ժամանակներում, երբ կոմս Գուդովիչը պաշարել էր Երևանի բերդը: Նա, շնայած Արբաս-Միրզայի Հովանավորությանը, պարուիկների կողմից Ենթարկվում էր անրնդ հատ վիրավորանքների, որոնք արքեպիսկոպոս Ներսեսի խոսքերով առյուծ ծների ու վագրերի նման ներխուժում էին սուրբ վանքը, կրծում պատրիարքին ու տանջամահ անում արեղաներին:

Կիմիածնի տաճարը կատարելապես թարանցին և պարսկական կառավարության ոչ մի ֆիրման շիրկեց նրան Երկանի ագահ Մահմադ-խանի նեղություններից, որը վանքին նայում էր որպես իր հարստացման աղբյուրի: Պարտրիարքի կոչման ստորագրումը հասակ՝ այնտեղ, որ երբ 1821 թվին պատրիարքը ներկայանում է Սարդ արին շնորհավորելու Նովրուզի տոնի առթիվ, կը քիչ ունենալով ուստական կառավարության կողմից շնորհաված շքանշաններ, զագագած խանը հայտարարում է, որ եթե նա մեկ էլ համարձակվի իրեն ներկայանալ ուստական շքանշաններով, ապա կկախվի նրանց ժապավեններով:

Վերջին հանդամանքն էլ ստիպեց Եփրեմին Նախիջեանի լեռնաշղթայի վրայով փախչել Ղարաբաղ:

Կաթողիկոսի մեր կողմերում երեալը Երմոլովին գրեց ծաւրաչեղ ծանր վիճակի մեջ. քաղաքական հանգամանքները մեզ թույլ չեն տալիս թաքնելու մեզ մոտ այդ քան կարեն հոգեսր գեմքի, որպիսին կաթողիկոսն էր, առանց խսիալու բարիդ բացիական հարաբերությունները երկու տիրակալների միջև, և Երմոլովի հարկադրված էր խնդրել նորին վեհափառությանը ետ վերադառնալ, որպեսպիսի դրանով հանգստացնի պարսիկներին, հակառակ գեպքում որպեսպիսի դրանով հանգստացնի ավելի դառը ճակատագիր, որին կարող էր ենթադադար գույքում առաջարկելով ավելի դառը ճակատագիր, որին կարող էր

թարկվել սուրբ էջմիածինը:

«Ծերությանս տարիներին Երեանի-խանի հայածանքները իմ ու կաթողիկոսական գահի դեմ՝ պատասխանում է դրան Եփրեմը, ստիպեցին ինձ ապագինել ոռուսական Միաբետի բարեգթությանը, դրա համար էլ թույլ մի տվեք, որ մեր հույսերն ի դերե ենեն, քանզի իմ յոթանասուն տարեկան ծեր հասակում բազմապիսի դրժվարություններ կրելով, այնպիսի ձմեռ օրով կտրել անզել եմ յեռներ ու ձորեր միայն նրա համար, որ ինձ հանձնեմ նորին Մեծության Հովանավորությանը, քանզի էլ որտեղ էր մեզ ավելի արժան ու հարմար դիմել, կամ այլև որ պետության վրա հույս դնելու»:

Երմոլովի անհրաժեշտ համարեց նախապես հարցում անել արտաքին գործերի մինխստը Նեսսերոդեին և գրեց նրան, որ կաթողիկով Եփրեմը առանց որեւէ մեկին նախազգուշացնելու եկել է Շուշի ու ցանկանում է գալ Թիֆլիս, և որ ինքը նպատակահարմար չի գտնում նրա այդ ցանկությունը կատարելու, որովհետեւ մեր հանդեպ կասկածամտության հակված պարսկական կառավարությունը ճշմարտության նմանվող այս իրադարձությունից կեզրակացնի, որ մենք ենք կաթողիկոսին կանչել, և որ մենք ինչ որ յուրջ մտադրություններ ենք թաքցնում: Պետերբուրգում այս գործին նայեցին այնպես, ինչպես Երմոլովի և կոմս Նեսսերոդեին պատասխանեց, որ «ոռու կառավարությունը չի կարող և իրավունք չունի նրան իր սահմաններում հովանավորելու և այն էլ կաթողիկոսի աստիճանով»: Միայն կարող է ճանաչել որպես հասարակ մի արեդայի, և այսպիսի կոչումին համապտասխան ցույց տալով հարգանք և թույլ կտա նրան ապրել որտեղ ցանկանա:

Մինչ յուծվում էր այս հարցը, կաթողիկոսը 40 հոգեոր անձնեց բաղկացած իր մեծաթիվ շքախմբով, որոնց մեջ էր նաև սրբազն Ներսեսը՝ ապագա ամենայն հայոց կաթողիկոսը, այցելեց կուսապատ ու հանդրվանեց Աթաքեկով եղբայրների տանը, որոնք կաթողիկոսին ընդունեցին նրա բարձր աստիճանին վայել մեծ պատվով ու ակնածանքով:

Այստեղ նա անցկացրեց մոտ վեց շաբաթ, և Հուզված ոչ միայն իրեն, այլև իր շքախմբին ցույց տված սրտաբաց Հյուրասիրությունից, օրհնեց Աթաքեկովների տունը ու իրենից որպես հիշատակ

թողեց սուրբ կոնդակ, որով աղաչում էր Աստծուն օգնելու ու Հովանավորելու նրանց առանց-իրենց: Ահա այդ կոնդակը, որը մինչ այժմ էլ խորին ակնածանքով, պահպանվում է Աթաքեկովների ընտանիքում:

«Ծառա Քրիստոսի ու Նորին ողորմածությամբ Եփրեմ կաթողիկոս ամենայն հայոց, ծայրագույն պատրիարք հայոց Առաքելական երեղեցու, յուսածածանց մայր աթոռու Ս. Էջմիածնի, Սուրբ Հոգու սիրով ու օրհնությամբ գերագույն քահանայապետը հղում է ողջույն երկու հարազատ ու օրհնված եղբայրներին. Հարգելի ու աղնիվ մելիք Հովհաննեսին (կամ ոռուսերեն Իվան կոչված) և Հարյուրապետ (յուղբաշի) աղնիվ Հակոբ-բեկ Հարությունով-Աթաքեկովին՝ ցանկանալով Զեղ ուրախ օրեր:

«Եր. Երրորդության սեր ու բարեբախտությունը, Հրաշագործ սուրբ զորությամբ գեղարդը, որը կպել է Քրիստոսին ու սրբությունը կառավարող աջր մեր մեծ յուսավորից սրբ. Գրիգորի, Մծբնեցի պատրիարք սրբ. Հակոբի և մյուսների, որոնց սուրբ մասունքները պահպանվում են մայր աթոռ սրբ. Էջմիածնի ծոցում, թող զարդարեն Զեղ հոգեպես ու մարմնապես, թող լցնեն Զեր տունն ու շտեմարանները անհանում բարիքներով ու առատությունով:

«Այս ողջունից ու օրհնությունից հետո ես պետք է հայտնեմ Զեղ, սիրելիներս, որ սրբ. Առաքելայր Հոռմեացիներին ուղղած իր բարեմաղթությունում գրում է, «տվեք ամենքին իրենց հասանելիքները և ոչ ոքի պարտք մի մնացեք»: Արարիշի բազմաթիվ բարերարությունները արդարացի կերպով մեզ՝ բանական էակներիս պարտադրում է բատ պատշաճի գնահատել այդ բարերարությունները և իսկական Աստծուն, որպեսի արտասանենք. «Ճեր, մենք՝ անարժան ստրուկներս արել ենք այն ամենը, ինչ հարկն էր կատարելու»: Ճիշտ այդ կերպ Առաքելայրների ուսմունքի համաձայն բանական էակները պարտավոր են վճարել մեկը մյուսի պարտքերը և պարտք չմնալ ոչ ոքի:

«Բաղավորին վայել է պահպանել իր հպատակներին իսպաղության մեջ և նրանց շծանրաբեռնել սահմանվածից ավել զանազան հարկերով: Իսկ հպատակները պարտավոր են թագավորներին ընդունել որպես Աստծո իսկական պատկերը:

«Եկեղեցու սպասավորները նույնպես աշխարհականների մեջ պարտավոր են ցանել հոգեորր, այսինքն քարոզել Աստծու խոսքը և աղոթել ողջերի ու մեռածների համար, որպեսզի առիթ չտան այն ասացվածքներին, որում Առաքյալը հանդիմանում է առաջիւ հովիվներին ու քահանաներին՝ արտահայտվելով այսպես. «Նրանք խժում էին ժողովրդին, ինչպես որ թոշունները՝ հացը, և Աստծուն է շէին աղօթում»:

Բայց աշխարհականներն էլ պարտավոր են հոգալ եկեղեցու բապասափորների պետքերը, կերակրել, հովանափորել նրանց, համաձայն առաքելական կանոնների, որը բարրառում է Հետելարը.

«Մենք Զեր մեջ ցանեցինք հոգեորր, Հետելարը և իրավունք ունենք հավաքելու մարմնականը, նրանք, որոնք ծառայում են ասաճարներում, տաճարներումն էլ պիտի կերակրիվեն»: Դուք Հետելուի Առաքյալի ուսմունքին, մեր ճանապարհորդության ժամանակ առաստան ավելցիք մեկ և մեր եղբայրներին Զեր օրհնյալ տանը, շխոսերով այն մասին, որ մեզ Հետ էր նաև պատրիարքարանի դիմանապետ, արքեպիսկոպոս Ներսեսը՝ իր մարդկանցով, որոնք մերի հայ կազմում էին 40 մարդ:

«Հետելարը մենք պարուավոր ենք ցանել հոգեորր, ցանկանալով Զեր ողջերին բարորություն ու առողջություն, իսկ Զեր հանգուցյալներին՝ երկնային արքայություն: Զեր կողմից ցուցց տված հյուրնեկայության ու ծառայությունների փոխարեն ի նշան եռախտապարտության թողնում ենք Զեր տանը սույն կոնդակը հավիտայնս հավիտենից: Եվ թող Տեր Աստվածը Օրհնի ու ամբազնի Զեզ, Զեր ողջ բնատանիքը, Զեր մտերիմներին ու ազգականներին, օրհնվեն Զեր այգիները, մարդագետինները ու Զեր ագարակները և Զեր բարի զորձերը: Թող Զեր մեջ ու Զեր ողջ կյանքում բուն դնի Հիսուս-Քրիստոսից բիոդ երջանկությունը: Երուժ առողջ ու բարեհաջող:

Տրված է 20-ր հուլիսի 1822 ամի, օրհնված գյուղն կուսապատ: Զեզ համար աղոթող, ամենայն հայոց կաթողիկոս, վշտահար Եփրեմ»:

Հրաժեշտ տալով Շուշի ուղեսրվող իրենց հոգեոր հայրապետին, Հովհաննես և Հակոբ եղբայրները ողջ շքախմբին բնծաներ պրոցեցին, իսկ էջմիածնի վանքին նշանակալից նվիրաբերություն

արեցին:

Մինչդեռ, կաթողիկոս Եփրեմը վերադառնայով Շուշի, ստանում է Երմոլովի նամակը, որում հաղորդվում էր Պետերբուրգում նրան վերաբերվող բնդունված, որոշման մասին: Զցանկանայով վերադառնալ էջմիածնին, վախենայով Պարսկական կառավարության հարձակումներից, Եփրեմը գերադասեց Հրաժարվել կաթողիկոսի կոչումից, այս մասին կազմված դրավոր ակար ուղարկում է Երմոլովին: Եփրեմը իր մնացած օրերը որոշում է անցկացնել Բորշալուի երկրորդ գծում գտնվող Հաղպատի հայկական Առւրբ-Նշան վանքում և 1822 թվականի օգոստոսի 17-ին Ելիզավետպոլի վրայով Շուշուց այնտեղ է ուղեկորվում: Եփրեմի հրաժարականը Եւրեանեանում մեծ իրարանցում առաջ բերեց, որը Երմոլովի բացատրում էր նրանով, որ կաթողիկոսի Պարսկաստանից Հեռանալուց սկսած սպառվեցին էջմիածնի եկամուտները, որոնք գալիս էին ամեն կողմից՝ համարակար պակասեցին նաև ազահ, բնշամոլ Սարդարի եկամուտները: Երմոլովը կանխատեսել էր, որ պարսիկները համառը իրար կաման կծագուն վերադարձներ էին կոկապես, Երեանի խանը դիմեց նույնիսկ սպառնալիքի, թե կարող է բնարել, ու նրա փախարեն նստեցնել նոր կաթողիկոս: «Զերդ բարձրաստիճանություն,-գրան պատասխանում է Երմոլովը,- ինարկե մոռացել եք: որ կաթողիկոսի ճանաշումը ի թիվս այլոց կախված է նաև իմ կայսրից, իսկ բնարության իրավունքը պատկանում է ողջ Հայ ազգին, որոնք պրում են ոչ միայն Պարսկաստանում»:

Պատճառաբանությունը այնքան համոզից էր, որ Սարդարը լոեց, բայց դրա փոխարեն մեզ մոտ վախ առաջացավ, որ նա իր նրապատակին հասնելու համար կդիմի բռնության և գաղտնաբար կարող է Հաղպատ ուղարկել Հրոսակախումբը, Եփրեմին առեանգելու և էջմիածնին տանելու համար: Այս վատնգր այնքան մեծ էր, որ Երեանի սահմանագծի գորքերի հրամանատար գնդապետ, իշխան Մեհարսամիձենին հայտնված էր, որ ձեռք առնի նախազգուշական ամեն միջոց, կաթողիկոսին շրջապատել հավատարիմ մարդ կանցով և դեպի Հաղպատ առնող բոլոր ճանապարհներով բաց շթողնել ոչ մի պարսիկի:

Այդ պես շիսվեց 1826 թվի ամառը, երբ պարսկական հորդ աները, հանկարծ ՚ի, առանց պատերազմ՝ հայտարարելու ներխուժ Եղին

մեր սահմանից ներս, և ամպրոպր առաջին Հերթին ճայթեց անպաշտապան Հայ բնակիչների վրա:

Փամբակն ու Շորագյալը առաջին Հերթին ենթարկվեցին Երեանի խանի Հարձակումներին, գյուղերը դատարկվեցին, երեխանների ու կանանց մեծ մասը ենթարկվեցին տանջալից մահվան, հարյուրավոր բնտանիքներ գերի քշվեցին: Տարեգրությունը շի թողել մեզ այդ բոլոր նահատակների անունները, բայց մինչեւ հիմա է տեղական բնակչության հիշողության մեջ ապրում են ավանդություններ այն խիզախությունների մասին, որ կատարել են այն ժամանակ, ինչպիսիք են Հարում գյուղի ավագ, յուղբաշի Դալի-Ղազարի<sup>9</sup> Հերոսական մահը, Ղարաբիլիսցի Ավետիքի, Համամյեցի Հայուհի Մանուշակի և շատ ուրիշների:

Սկզբում՝ պարսիկների ասպարակությունները տարածվեցին այնքան, որ Հասնում էին մինչեւ Թիֆլիսի արվարձանները: Ասպարակների մի խումբ նույնիսկ Հասավ Հաղպատի վանքին, որտեղ ապրում էր Հոչակավոր կաթողիկոս Եփրեմը, որին պարսիկները վաղուց էին ձգտում գերի վերցնել: Տարեցախտարար, մի քանի օր դրանից առաջ Հայտնի արքեպիսկոպոս Գրիգոր Մանուշարյանցը, որ Հոչակաված էր Գուղովիշի ու Ցիցիանովի ժամանուկ իր Հերոսական արարքներով ու պարզ հատրված էր Գեորգիի, Վլատիմիրի ու Լինարի շքանշաններով, պարսիկների Հեծերազորի սարսափը, Հավաքելով քառասուն անվեհներ կտրից Հայերի, նրանց հետ զնաց Հաղպատի վանքը ու այնտեղից դուրս բերեց կաթողիկոսին ու ասպարավ Թիֆլիս Ճանապարհին, Խրամ գետն անցնելիս, վրա Հասան պարսիկները, նրանք մոտ 300 հոգի էին, սկսվեց ձեռնամարտը: Արքեպիսկոպոսի ձին սպանվեց ու նրա երկու բարեկամները թրամավեցին, բայց նա Հերոսարար ճեղքեց ու դուրս եկավ Հակառակորդի շարքերից ու կաթողիկոսին բարեհաջող Հասցըրը Թիֆլիսի Վանք մայր Եկեղեցին: Այստեղից Մանուշարյանցը Հայկական ծոկատու Շամշադին, որը գտնվում էր խիստ գրավիած, լարված վիճակում: Այստեղ նա մասամբ Համոզելով, մասամբ էլ զենքի ուժով ետ պահեց թաթարներին, որոնք ձգտում էին թալանել խաղաղ բնակիչներին, ջարդեց պարսկական մի քանի խմբերի ու գերությունից աղատեց 500 ավելի Հայ բնտանիքներ:

Մինչ այս ամենը կատարվում էր Երեանի խանության սահմաններում, պարսկական գլխավոր բանակը մտավ Ղարաբաղ ու պաշարեց Շուշին, որտեղ գնդապետ թեուլու հրամանատարությամբ փակվել էին 42-րդ եգերյան գնդի վեց վաշտերը: Զանգեզուրում եղած երեք վաշտերը կտրվեցին ու չկարողանալով ճեղքել, թնդնել թշնամու շրջապատումը, վայր դրեցին գենքը: Բայց նրանք կիրկվեցին, եթե նրանց հրամանատար փոխգնդապետ Նազիմկան վստահեր Հայերին, որոնք առաջարկում էին Հրանտիները թաղել իրենց գլուղում՝ Գորիսում, իսկ զորախումբը յեռնալին արահետներով անցկացնելով Շուշի, ինչպես մի ժամանակ այդ անում էր Վանին Կարյագինի ու Իլյաշենկոյի ծոկատների Համար: Նազիմկան շրնդունեց այս առաջարկը, և վաշտերը կործանվեցին: Հազար սվին ունեցող ծոկատից փրկվեցին միայն երկու սպա ու վեց ստորին աստիճանավորներ, որոնց փրկեցին Հայերը, նրանց պահեցին Ղայադերասի գյուղում, որտեղ նրանք զանկալի Հյուրեր էին, իսկ Ղարաբաղից պարսիկներին քշելուց հետո, բարեհաջող կերպով միացան իրենց գնդին: Հայ բնակչության վիճակը Ղարաբաղում ավելի սարսափելի էր, քան Փամբակում ու Շորագյալում: Միայն մոտակա Հայկական գյուղերի բնակիչները Հասցըրին փրկվել՝ պահպանվելով բերդի պարիսպների ետեղում ու պաշտպանություն, մնացած բնակչությունը, որը Հանկարծակի էր եկել՝ թայանվեց ու կողոպտվեց: Արբաս-Միբազան Հայի մեկ գլխի Համար տալիս էր մեկ թուման, պարսկական բանակատեղում 60 մարդ խիստ հսկողության տակ սպասում էին իրենց մահվան ժամին:

Ջրաբերդի մահայր, որտեղ մելիք-Ղանու բնտանիքն էր ապրում, միանգամից կտրվեց Շուշուց ու Հանձնվեց ավարի, փախչելու տեղ շկար: Մելիք-Ղանին ու նրա եղբայր՝ Հակոբը կորցըին իրենց ողջ ունեցվածքը, Հոտերը, Հիանալի երամակը՝ բաղկացած 300 գյուղի Ղարաբաղի գամբիկներից, որոնց քշեցին պարսիկները: Նրանք երկուսն էլ թողեցին Հարթավայրում եղած իրենց Հարազատ գյուղը ու բնտանիքների Հետ թափնվեցին Զերմուկի կիսավեր ամրացում, որը գտնվում էր Թարթառ գետը թափուղ Թրդի վտակի վրա: Նրանք այնուեղ միջոց էին մտածում, որ կարելի լիներ օգնել պաշտպան մահերին՝ ծողովրդական ա-

դետները ու վերջ տալ անմիտ, արյունահեղ կոտորածին, որն իրենից ներկայացնում էր միայն թումաններ վաստակելու հարց: Բայց նրանց ջանքերը այս գործի համար անհաջող էին, և ակամա դառնությամբ պետք է դային այն համոզման, որ իրենք անզոր են իհարկե, եթե հայերն էլ պարսիկներին դիմավորեին խոնարհարար, աղուհացով ու իրենց երիտասարդության ծաղիկը տային պարսկական բանակին, ինչպես այդ արեցին թաթարները, նրանք կարող էին պահպանել իրենց կյանքն ու ինչքր: Սակայն հայերի մեջ դաշտաններ չգտնվեցին, և նրանք բոլորն էլ դատապարտված էին կործանման:

Այս ծանր օրերին ժողովրդի փրկիչը դարձավ Վանին, բայց մենք կտեսնենք, թե ինչպիսի թանկ ու սարսափելի գնով ձեռք բերվեց իր Հավատակիցների փրկությունը: Ի դեպ, Շուշու պաշարումը շարունակվում էր: Վեց թույլ վաշտեր, առանց պարենի, առանց վառոդի ու արկերի վեց շաբաթ հերոսարար ու անսասան պահպանին ամրոցը: Ամրոցի ներսում ապաստան գտած հայերի միահամուռ օգնում էին զորքին և նրանց հետ էլ կրում էին պաշարման ամեն զրկանք ու ծանրություն:

Չի կարելի չնշել, որ Շուշու պաշտպանների մեջ էր նա Հակոբ յուղաշու որդի ին՝ Ասլան բեկը, երիտասարդ մի մարդ, որը գտրնովում էր գնդապետ թեռւտի մոտ: Նա նոր էր ամուսնացել, բայց երիտասարդ կնոջը թողեց ծնողների խնամքի տակ, որոնք ապաստանել են Զերմուկում, իսկ ինքը Շուշիում մնաց մինչեւ պատերագմական գործողությունների վերջը: Տացի գնդապետ թեռւտի մոտ իր պարտականությունները կատարելուց, նա ուրիշներին համար պաշտպանում էր ամրոցը և գնում էր հետախուզության:

Հետագայում, երբ պաշարումը հանված էր, թեռւտը հաղորդում է Երմոլյովին. «Ամրոցը պաշտպանող հայերի մասին պարտքս եմ համարում բացարել, որ նրանց մատուցած ծառայությունը արծանի է ուշադրության, քանզի նրանք ամենքը գործում էին գերազանց քաջությամբ, դիմանում էին հակառակորդի բազմաթիվ գրոհներին, ու ետ էին շպրավում նրանց համար մեծ կորուսաներով, արհամարհում էին պարենի պակասը և ոչ մի անգամ շեն մտածել ամրոցի հանձնման մասին, նույնիսկ, երբ վրա հասավ

## բացարձակ սովոր»:

Ի պատասխան սրան Երմոլյովը հրամանագրում է. «Մեզ դավաճանած մահմեղական բոլոր բեկերից խել նրանց կառավարման ենթակա հայկական գյուղերը և բնակիչներին հայտնել, որ ի հատուցումն կայսեր հանդեպ ունեցած անսասան հավատարմությանը, նրանք այսուհետեւ հանդիսանում են պետական կառավարման ենթակա»:

Հետագայում Կովկասի հայտնի հերոս, գեներալ-ադյուտանտ Գեորգիի 2-րդ աստիճանի մեծ խաչով պարգևատրված իրան Դավիթովիի լագարեր այդ ժամանակ 7 տարեկան երեխա էր ու գրուրիվում էր պաշարված ամրոցում, նրա կրտսեր եղբայրը՝ Հակոբը, պաշտոնաթող գնդապետը, որը ապրում է մինչեւ օրս, նույնպես Հիշում՝ էր այդ պաշարումը, և նրա, ինչպես նաև իրան Դավիթովիի սպամությունները հանդիսանում են ոռւս ժողովրդի փառքի պատմության այդ էջերի հիմնալի նկարագիրը, կենդանի պատկերը, որը թվում էր թե ոռւս երեխաները դպրոցական նստարանների վրա պետք է ուսումնասիրեն ոչ պակաս, քան, հույներինն ու Հռոմեացիներինը: Մանկության տպագործությունները առհասարակ լինում են ամելի տպագործից, բայց բնական է, որ նրանք կենտրոնանում են առ առ պարկաների վրա, որոնք ավելի մատչելի են երեխայի հասկացողությանը:

Լազարեների բնածնիքը Շուշիում ուներ իր սեփական տունը, և որպես հայկական բնածնիք, շրջապատված էր Հայերով, որոնք փախել էին շրջակա գյուղերից ու պատասն էին գտել նրանց քարետան բնդարձակ բակում: Բնական է, որ Լազարեների երեխաները իրենց ժամանակի մեծ մասը պետք է լինեին ու անցկացնեին իրենց հասակակից հայրենակիցների հետու մանկական հետաքրքրությամբ պետք է լինին նրանդ ժողովրդական բարբառը: Իրան Դավիթովիիշը պատմում էր, թե այդ խոսելածեցի իր ստացած տպագործությունները մանկական լինելուց հեռու էին: Խոսքերը մեծ մասամբ, իհարկե, վերաբերվում էին օրգա գեպերին, ևս այստեղ, այդ հասարակ մարդկանցից սովորեցի նվիրվածության, պարտքի ու անձնագության խոսքերը, որոնք ասվում էին Հայ մարդկանց կողմից ամեն քայլափոխում: Ես լսում էի, որ ամրոցում չի եղել վառող, և որ վառողի վարպետ՝ Պողոսը անվճար, զորքերի համար օրական

պատրաստում է 20-30 ֆունտ վառողք Ես հիշում եմ հայ Հարություն Ալթունովին, Գեորգեան խաչով ու պարանոցի ոսկոյ մեդալով, այն ժամանակ կամավոր հանձն առավ անցնել պարսիկների շրջապատման օղակից ու Երմոլովին պաշարված ամրոցի մասին տեղեկություն տանել: Նա հաղորդվեց Սուրբ խորհուրդներով\* և ողջ կայազորի օրհնությամբ ուղեկցվելով, գիշերը պարանով իջավ ամրոցի պատից: Մի քանի օր անց նա վերադարձավ ու Երմոլովից թիւուաի անունով գրություն բերեց: Հիշում եմ ինչպես ամրոցում ապաստան գտած գյուղացիները իրենց բոլոր անասունները տվեցին ամրոցի կայազորին՝ կերակրման համար, ինչպես մեր հարուստները՝ Հախումովը, Բեղրանբեկ մելիք-Շահնազարովը, Զոհրաբ աղա Թառումովը և ուրիշները բնդհանուր օգտագործման հանձնեցին իրենց ունեցած հացի զգալի պաշարները, որը ի դեպ հատիկ էր, հիշում եմ նաև ինչպես մեր հայերը գիշերները իրենց ուսերի վրա պարկերով ցորենը տանում էին Շուշիինդ գյուղի ջրաղացը, որանու եղայրները՝ յուղբաշի Սաֆար ու թոստոմ Թարխանովները արագ աղում էին ու արագ ետ էին բերում»:

Առանց այս օգնության կայազորը երբեք չէր կարողանա գիմանալ վեցշաբաթյա պաշարմանը: Աբբաս-Միրզան բաղմիցս փորձերը ջախջախիվում էին՝ Հանդիպելով Հայերի Հերոսական գիմագրությանը, որոնց ղեկավարում էին Թարխանով եղբայրները: Մինչեւ հսկ հսկ հսկուներ էին նրանց կանալը, և նրանցից մեկին՝ Խաթուհունայն ժամանակ գիտեր ողջ Հարաբարու:

Մենք գիտավորյալ ավելի շատ խոսեցինք այս մանրամասների մասին, որպեսզի ցույց տանք այն ժամանակվա հայ բնակչության ողին, իսկ այդ ոգու համար բնակչությունը բացարձակակես պարտական էր նույն մելիք Վանու ցույց տված օրինակներին, որի սրբագործությունների ու ոռուներին նվիրված լինելու օրինակների վրա էլ դաստիարակվում էր երիտասարդ սերունդը: Մելիք Վանու անունը բավականին ժողովրդական էր, և դժվար էր կանխատեսել, որ այդ մարդու, որի կյանքի պատմությունը երկրամասում ուներ հսկայական դաստիարակչական նշանակություն, որ նրա գլխին կարող էր կուտակվել սե ամպ և այն ճայթեց անսպասելի հարվածով:

\* Կամ ս. նշխարներով:

Իսկ ամպրոպը մոտենում էր:

Շուշիցիների համառ պաշտպանությունից գրգռված Աբբաս-Միրզան հրամայեց իմանալ ովքեր են ղարաբաղցի հայերի մեջ ամենազդեցիկ մարդիկ: Նրան տվեցին արքեպիսկոպոս Սարգիս Զալալյանցի՝ Աղվանից կերպիկոսի, հետո Տաթեկի վանա-Հոր, արքեպիսկոպոս Մարտիրոսի ու երկու մելիքների՝ Ջրաբերդի մելիք Վանի Աթաբեկովի ու Խարմիդորդ մահայի կառավարիչ Հովսեփ Բեգլարովի անունները: Մրանցից արքեպիսկոպոս Մարտիրոսը պարսիկների կողմից արդեն բռնվել և ուղարկվել էր Թավրիզ ու պահպատմ էր Հսկողության տակ: Մնացածների հետեւց ուղարկված էր հսկողության տակ: Մնացածների հետեւց ուղարկված էր հսկողության տակ: Վահագական հեծյալ պահակամբը հսկողության տակ պահակական գորակայան կենդանի վերադառնալու հույս չունենալով:

Ճանապարհին մելիք Վանին երկար մտածում էր իր վիճակի վրա: Թավրիզ տարված ու մահվան դատապարտված արքեպիսկոպոսի օրինակը նրան համոզում էր, որ տվյալ դեպքում պեսք է մի այլ ձեւ բնարել, նա նախօրոք որոշեց, թե ինչպես է իրեն պահելու և ինչ է ասելու Աբբաս-Միրզայի առջեւ: Պարսկական ճամբար գալուն պես Վանուն ներկայացրին գահաժառանգին: Բոլորը գիտեին, որ մելիք Վանու ճակատագիրը վճռված էր նախօրոք, և որ նա հին մեղքերը կհատուցի իր գլխով: Եվ իսկապես, Աբբաս-Միրզան դիմավորեց նրան հարցով:

Հիշում ես, մելիքը որ գու երեք անգամ իմ ձեռքից խլեցիր ավարը, որու փրկեցիր կարյագինին, Կոտուարեսկուն, Խլաշենկուին:

Վանին կանխատեսել էր այս մեղադրանքներն ու հանգիստ նայելով գաղաղած գահաժառանգի աշքերի մեջ, հանգիստ պատասխանեց պարսկական առածի խոսքերով:

Չի լինում ծառա առանց մեղքի, շի լինում աղա առանց գրթության:

Պատասխանը դուք եկավ:

Համապատասխան գահաժառանգը, և ինչով քեզ վարձատրեցին ուռուները:

Վանին ցույց է տալիս իր ուսադիրներն ու երկու մեդալները:

-Միայն այդքանը,- ծիծաղում է գահաժառանգը, ու հրամա-  
յում է նրանից պիկել մեդալները ու դրանք կախել իր որսի շան  
վզից:

-Մեր շահը,- ավելացրեց նա ազդու,- քեզ խան կդարձներ ու  
կտար մի ամբողջ մարզի կառավարում:

-Կեզցե գահի ժառանգորդը,- գոչեց Վանին, իմ Հայրը ծա-  
ռայել է Ղարաբաղի խանին: Ծուսները գրավեցին Ղարաբաղը, և ես  
սկսեցի ծառայել Ծուսներին, Եթե Ղարաբաղը դառնա քո մարդը, ես  
կծառայեմ քեզ. ծառան ենթարկվում է իր տիրոջը:

-Ղարաբաղը իմն է,- ասաց գահաժառանգը,- իմ գորքերը տրո-  
րում են նրա հողը, իսկ խեղճ ոռուսները չեն համարձակվում նույնա-  
խակ քթերը դուրս հանել իրենց բերդից:

Վանին իսկույն օգտվեց, խոսքի այս շրջադարձից:

-Եթե Ղարաբաղը քոնն է,- պատասխանեց նա հարգալից խոնար-  
հելով գլուխը,- Հապա ինչու պարսկիները կոտորում են քո Հպա-  
տակներին: Այդպես անում են միայն օտար ու թշնամու երկրում:  
Յարը երբեք իր հպատակներին չի ոչչացնում, այլ բնդՀակառակը,  
ձգում է բազմացնել նրանց թիվը: Որքան շատ են հպատակները,  
այնքան հզոր ու փառավոր է թագավորությունը:

Աբբաս-Միրզան ոչինչ չպատասխանեց: Նա արձակեց Վանուն,  
բայց հրամայեց նշանակել լրտեսներ, որոնք պիտի հսկեին նրա ա-  
մեն մի քայլին:

Վանին այդ նկատեց ու չհապաղեց օգտվելու այդ հանգաման-  
քից:

Դուրս գալով գահաժառանգի մոտից, ուղիղ գնաց բանտար-  
կյալ Հայերի մոտ, որոնք գտնվում էին պարսկական զորակայանում,  
և ասաց նրանց.

«-Մի վախեցեք, գահաժառանգը ասաց, որ Ղարաբաղը իրենն է,  
ու շուտով Զեզ ազատություն կպարգեն: Հիմա ոչ ոք Զեզ չի հա-  
մարձակի դիպչելու:

Այս խոսքերը իսկույն հաղորդվում է Աբբաս-Միրզային, սա-  
կայն զայրութի փոխարեն, որին սպասում էին ամենքը, թագաժա-  
ռանգը պահանջեց, որ իր մոտ կանչեն Վանուն, հագնում է նրան

սպատվավոր խալաթ և ինքն էլ թանկարժեք թուրք կապում է Վանու  
գոտուն, բայց երեւութին, ցանկանալով ոչ թե վախով, այլ վաղաք-  
շանքով իրեն մոտեցնել խելացի ու ազդեցիկ հային:

Այն ժամանակ էլ Հետեւում է հրաման, որ ոչ ոք չդիպչի հայե-  
րին, և իսկապես կոտորածին վերջ արվեց, քանի որ թագաժառանգը  
Հայտարարել էր, թե այսուհետեւ Հայերի գլխի համար ոչ թե թու-  
մանով կվճարի, այլ նրանց գլխով, ովքեր կբերեն Հայերի գլուխ-  
ներ:

Այդ ժամանակներին է վերաբերվում Աբբաս-Միրզայի փորձը՝  
իր կողմը թեքել Շուշին պաշտպանող Հայերին, ու դրանով թույաց-  
նել կայազորը և անկարելի դարձնել հետագա պաշտպանությունը:

Այդ նպատակի համար Աբբաս-Միրզան հրամայեց ամրոցի պա-  
տերին մոտեցնել մի քանի հարյուր Հայ բնտանիքների, արքեպիս-  
կոպոս Արքոսի հետ միասին և պարսկիները Հայերին կոտորելու  
սպառնալիքով ստիպեցին, որ արքեպիսկոպոսը հորդորի Հայերին՝  
Հանձնելու ամբողքը, թեկուզ այսքան մարդկանց կոտորածը դադա-  
րեցնելու համար: Բայց Հայերը պարսկապների վրայից գոռում էին,  
որ նրանք չեն գավաճանի ոռւսներին, իրենք հորդորում էին իրենց  
եղբայրներին, որ ենթարկեն իրենց սպասվող դառը ճակատագրին,  
քանի որ ավելի լավ է կոտորվեն մի քանի հարյուր մարդ, քան թե  
ողջ ազգը բնկնի դպրացի ծանր յծի տակ: Նշանակալից է, որ այս  
բանակցություններում չէին մասնակցում ոչ Վանին, և ոչ էլ Մե-  
րձեկայարութիւնը և Աբբաս-Միրզան նրանց այդ չէր հարկադրում:  
Այսպիսով, փորձը հաջողություն չունեցավ, թե ինչով կվերջանա  
այդ անհաջողությունը մեր գերիների համար, դժվար է ասել,  
բայց մի քանի օր անցպարսկական բանակատեղի համակից անսո-  
վոր իրարանցումով: Լուր ստացվեց, որ պարսկական զորքերը Շամ-  
խորի մատուցներում ջախջախված են, և որ Մաղաթովիր վերցրել  
է Ելիզավետպոլի: Օգտվելով այս իրարանցումից և վանին, և Սար-  
գիսը և Մելիք-Բեյլարութիւնը գիշերը փախան ճամբարից: Նրանց որո-  
նելու ժամանակ չկար և պարսկիները թողնելով Շուշիու պաշտու-  
մը, շտագ շարժվեցին գեղի Ելիզավետպոլ: Այնուղի ինչպես Հայու-  
նի է 1826 թվի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Ելիզավետպոլ-  
յան Հայտնի ճակատամարտը և Աբբաս-Միրզան գլխովին ջախջախ-  
ված փախավ Աբբասի այն ամիր: Պատկերը պատրաստվում էր հե-

տապնդել Հակառակորդին, բայց զորքերը չունեին պարեն և այն շրջակալքում գտնել Հնարավոր չէր: Այդ պահին Պասկեիչը հիշում է Վանուն և սեպտեմբերի 18-ին գրում է նրան այս Հանձնառարականը:

«Պարոն պող պորուչիկ մելիք-Վանուն, ոռւսական անհաղթ գործերը մոռ ժամանակներս գուրս քշեցին ուժառադրում է Արքաս-Միրզայի առաջնորդությամբ լիտիարար ներխուժած պարսիկներին, ապահովեցին ոչ միայն խաղաղ բնակչության ունեցվածքը, այլև փրկեցին նրանց կյանքը: Հայերի անսասան համատարմությունն ու ջանասիրությունը արդեն հայտնի է թագավոր-կայսերը: Իսկ ես նախապես լավ դիտենալով Զեր փութաջանության մասին ու ծառայությանը մշտական պատրաստակամ լինելու գանկությունը, սույն Մանաս-բեկ, մելիք Բեգլարովի միջոցով ուղարկում էմ 800 ոռւրի արծաթով ու Զերդ ազնվությանը հանձնարարում եմ, Զեղ ենթակա Հայերից ու թաթարներից զորքի կերարաժնի համար զնել եղիքրավոր անասուններ: Կատարելով այս, Դուք ձեռք կրերեք հրամանատարության նոր երախտագիտությանը արժանանալու իրավունքը»:

Վանին հաջողությամբ ու արագ կատարեց այս հանձնարարությունը, բայց շնորհակալություն ստանալու մնաւմ էր բապակային, իսկ հիմա նրա գլխին անսպասելի ճայթեղ ամպրոպ:


Անբարեհած մարդկանց կողմից մելիք Վանու, և արքեպիսկոպոս Սարգսի պարսկական զորակայանում գերի լինելու ներկայացված էր խեղաթյուրված կերպով, որպես բացարձակ դափանանություն, և քանի որ ժամանակները խառն էին, քննելու ժամանակի շկար՝ ուստի Վանին առանց դատի ու քննության վարչական կարգով աքսորվեց Բաքու, իսկ արքեպիսկոպոս Սարգիսը հսկողության տակ բերվեց Թիֆլիս ու Ենթարկվեց ինչպես քաղաքացիական, անպես էլ հոգեոր դատի, որը նախապես պետք է հաներ նրանից արքեպիսկոպոսական կոչումը: Բայց ամենախիստ ու մանրազնին քրնությունը պարզեց այն գաղըլի զրաբարառությունը, որը վերագրվել էր նրանց, երկուսն էլ կատարելապես արդարացվեցին, Վանին վերադարձվեց Բաքվից և Պասկեիչի կողմից արժանացավ ջերմ բնդունելության, իսկ արքեպիսկոպոս Սարգսին վերադարձրին իր թեմբ՝ Պարարագր, իսկ երբ մի առ ժամանակ անց Երևանի ու Նա-

խիջեանի խանությունները միացվեցին Ռուսաստանին, այս նոր ու բնդարձակ թեմի թեմակալ նշանակվեց Սարգիսը՝ միարոպոլիտի կոչումով, իսկ նրա տեղը նշանակվեց նրա Հարազատ ազգականը՝ միարոպոլիտ Բաղդասարը: Այսպես ցըվեցին սև ամպերը և Վանին, եւ Սարգիսը սկսեցին ժողովրդի մեջ ավելի մեծ հարգանք վայելել, քան առաջ:

Ժողովրդի հիշողության մեջ մինչեւ օրս ապրում է ավանդությունը այն մասին, թե ինչպես Վորոնցովը երբ նշանակվեց Կովկասուի փոխարքա, 1849 թվականին առաջին անգամ ալզելելով Շուշի իր մոտ կանչեց Վանուն, որին նա ճանաշում էր անձամբ դեռ Յիշեցիանովի ժամանակներից, ու նրա հետ վարվեց ինչպես հին գինակցի հետ, շատ մտերիմ ձեռվ: Վանին ներկայացրեց նրան իր որդի իներից մեկին՝ Միքայելին ու եղբոր, արդեն վախճանված Հակոբի թոռներից Ներսեսին ու Մովսեսին: Վորոնցովը ինքը վկա էր եղել կարյագինի ու Կոտլյարեսկու սիրանքներին, զիտեր Աթարեկովների ողջ բնտանիքը, խորը վշտակցություն հայտնելով Հակոբի 10 վաղաժամ մաշվան համար, երեխաներին սիրեց ու փաղաքշեց, ապա առատաձեզն նվերներ տվեց, իսկ երեք տարի անց, երբ երեխաներին բերին Թիֆլիս՝ մի որեէ ուսումնական հիմնարկում տեղավորելու, Վորոնցովը հրամայեց նրանց բնությունների Թիֆլիսի գիմնազիայի ազնականների գիշերօթիկը, որտեղ նրանք դաստիարակվում էին փախարքայի գումարների հաշվին:

Վանին ապրել է մինչեւ խոր ծերություն, մահացել է 1854 թվականին 75 տարեկան հասակում, իր կուսապատ կալվածքում:

Այսպիս, թատերաբեմից հեռացան Ղարաբաղում ոռւսական տիրապետության հաստաման առաջին քաջամարտիկները, սակայն Աթարեկով Եղբայրների ծառայությունների մասին հիշատակը երեկար ժամանակ ապրում էր ժողովրդի մեջ, և նրանց մասին նորից հիշեցին արդեն 1880 թվին Հետելա առիթով, նրանց հաջորդներից մեկը,՝ Երեմնի օկրուգային դատարանի անդամ, Ներսես Ասլանի Աթարեկովը՝ Հակոբ-Լուզբաշու թոռը, դիմել էր մեծ իշխանին՝ փոխարքային իրենից ու բնտանիքի մյուս անդամներից պետական գանձարանի օգտին բռնադրաված, դեռ խանի կառավարման ժամանակից ունեցած՝ 7 դյուդերի փոխարեն իրեն պետական հոգերից



Նկ. Մելիք Վանու տապանաքարը Կուսապատ գյուղի  
գերեզմանոցում:

բաժին տալու մասին; Այս խնդիրը քննվեց ու օրինական ճանաշ-  
վեց, և ահա թէ ինչ գրեց Մեծ իշխան-փոխարքան Պետքրուրդի  
Կովկասյան գործերի կոմիտեի նախագահին 1880 թվականի դեկ-  
տեմբերի 19-ին:

«Ներսես Աթարեկովը հանդիսանում է մեր կառավարությանը  
մեծ ծառայություններ մատուցած բնտանիքի ներկայացուցիչնե-  
րից մեկը՝ նրա պապը՝ Հակոբ-յուղբաշին, ու այս վերջինիս եղբայր  
Վանին, լինելով տեղական ժողովուրդներից առաջին կամավորները,  
որոնք անձավը մասնակցում էին 1805-1812 թվականներին Պարս-  
կաստանի սահմանակից մահմեդական երկրամասերը թուսաստանին  
միացնելու պարսիկների գեմ մղված կոիվներին, նրանք անվճար  
պարենով մատակարարում էին Կարյագինի ու կոտյարեսկու զո-  
րախմբերին, որոնք պարսկական թագաժառանգ Աբբաս-Միհրայի հրո-

սակների միջով իրենց ճանապարհն էին բացում, և Հետո, երբ նրանք  
պետք է անցնեին գժվարանցելի լեռներով, որպեսզի միանային Ցի-  
ցիանովի զորախմբին, նրանք Կարյագինի միակ ուղեկցողներն էին  
և ճշգորեն կատարում էին նրա հանձնարարությունները:

Համաձայն Բարձրագույնի 1846 թվականի դեկտեմբերի 6-ին  
տված շնորհագրին Աթարեկովներն իսկապես Ղարաբաղի նախկին  
մարզի Ջրաբերդի մահայում տիրում էին 7 հայկական գյուղերի,  
որոնք տարբեր ժամանակներում, տարբեր հիմքերով՝ նրանցից վերց-  
ված ու միացված է եղել պետական գանձարանի Հողերին:

Աթարեկովների վերջին կալվածքը՝ Կուսապատ գյուղու իր վա-  
րելահողերով, անապաներով, խոտհարքներով ու արտավայրերով  
մոտավորապես 10,000 դեսյատին՝ 1866 թվի դեկտեմբերի 6-ին  
Բարձրագույնի կարգադրությամբ վերցված է պետական գանձա-  
րանի տնօրինության տակ, իսկ Աթարեկովների ողջ բնուանիքին նր-  
շանակված է 1368 ոռւբյան թոշակ; Կուսապատը պետականացնելու  
հիմքերից մեկը եղել է գյուղացիների հողմից արված բողոքները:  
Մինչդեռ հետագա քննությունները ցույց տվեցին, որ գյուղացինե-  
րի բողոքը՝ Աթարեկովների հողմից գանձվող հողային հարկերի  
մասին՝ անհիմն էին:

Նկատի ունենալով վերոհիշյալը և հաշվի առնելով Ներսես  
Աթարեկովի անձնական 25-ամյա օգտակար, գերազանց ու ջանապեր  
ծառայությունները Անդրեկովիասի ուսումնական, վարչական ու  
դատական գերատեսչություններում, ես խնդրում եմ միջնորդել  
ամենաբարեկությունը՝ թագավոր-կայսերը՝ թույլատրելու վարձահա-  
տուց լինել՝ Երեանի օկրուգային դատարանի անդամ՝ Աթարեկո-  
վին, տալով նրան ու իր ժառանգներին որպես առհավետ սեփակա-  
նություն Երեանի գավառի Նասիրարադ<sup>12</sup> կոչվող ջրովի հողերը՝  
532 դեսյատին ու 1740 քառ. սաժեն, որը անվիճելի կերպով պետա-  
կան գանձարանին է պատկանում, դադարեցնելով ներկայումս Ա-  
թարեկովների կուսապատ կալվածքի համար արվող թոշակի վճա-  
րումը;

Թագավոր-կայսրը բարեհաջաց հաստատելու ներկայացված  
միջնորդագիրը, և այդպիսով, ի դեմս Ներսես Ասլանի Աթարեկովից  
մի անգամ ես հարգվեց մելիք-Վանու ու Հակոբ-յուղբաշի եղ-

բայրների փառակոր Հիշատակը:

Մեզ մնում է ասել, որ այս բնտանիքի ժառանգներից գոյությունը ունեն և այժմ։ Մելիք-Վանու մաշից հետո, որը ամուսնացած էր Հայ քահանայի աղջկա՝ Վարդուհու հետ, մնացին զավակներ։ Հովսեփը, Սարգիսը, Աթարելը ու Մելիք-բեկը, Վերջինն մեռավ անգավակ։

Աթարելը (Աթամը) երեխա Հասակից ուղարկվեց կադետական կորպուս և ազնվական գնդից բաց թողնվեց սպացի կոչումով։ Նա մասնակցեց Ղրիմի պատերազմին, 11 ամիս նա անրնդ հատ եղավ Սեաստոպոյում և մասնակցեց նրա պաշտպանությանն ու մեռավ գնդապետի աստիճանով։ Այս Ադամի որդի՝ Անդրանիկ (Անդրեյ) Ադամի Աթարեկովը 1870 թվին Ալեքսանդրյան երրորդ կինվորական ուսումնարանից բաց թողնվեց Հրեանաու պող պորուշիկի առաջանով։ Հետո նա առաջին կարգով ավարտել է Միամիլիովյան Հրետանային ակադեմիան, որից հետո ստանձնեց գվարդիական հեծուայ-Հրետանային բրիգադայի շորորդ մարտկոցի հրամանատառունը, հետո եղել է Օդ եսայի գինվորական օկրուգի Հրետանային պոլիգոնի պետք, իսկ Հիմա նա ունի գեներալ-մայորի աստիճան և Մոսկվայում զբաղեցնում է առաջին գրենադ երան Հրետանային բրիգադայի հրամանատարի պաշտոնը։

Հովսեփ և Սարգիս բեկերի ժառանգները մինչեւ Հիմա էլ ապրում են Կուսապատում, ունեն ոչ մեծ հողամասեր և օգտավում են պետական դանձարանին հանձնված գյուղի փոխարեն ստացած կենսաթոշակից։ Հովսեփից հետո մնացել են երկու որդիները՝ Հարությունը ու Իսայան բեկերը, իսկ Սարգսից՝ հետո՝ Նիկոլայը, Ալեք-

սանդը ու Զումշուրը։  
Ինչ վերաբերում է Հակոբ-բեկին, նա ամուսնացել է Սարումայների բնտանիքից՝ Խաչենի մահալի Սելի-Շենցի Զավահիրի հետ, նա ունեցավ երեք որդիներ՝ Ասլան, Զարալ և Հարություն՝ բեկերը, վերջին երկուսը մեռան անգավակ, Ասլանը ունեցավ երեք որդի, գրանցից մեկը՝ Նիկոլայը, մեռավ պետական խորհրդատուի աստիճանով, զբաղեցնելով Ելիզավետպոլի օկրուգային դաստիանի Հատուկ գործերի քննիչի պաշտոնը, նրանից հետո մնացին երկու որդիները՝ Լեռնն ու Միքայելը։ Ասլանի միջնեկ որդին՝ Մովսեսը պետական խորհրդատու է ու ներկայումս նա բժիշկ է

Շուշիում, ունի Ասլան, Ալեքսանդր և Աբրահամ որդիներ։ Վերջապես ավագ որդին Ներսեսը, Երեանի դատարանի նախկին անդամ, մինչեւ Հիմա ապրում է Թիֆլիսում, ունի բազմանդամ բնտանիք։ Նրա որդիներից մեկը՝ Հովսեփը գյուղատնտես է, դասրնթացն ավարտել է Հովհաննայումում, համարկում է պահեստի պրապորչիկ, երկրորդը՝ Տիգրանը և երրորդը՝ Միքայելը, երդիալ Հավատարմատարների օգնականներ են, մեկը Բաքվում, մյուսը՝ Թիֆլիսում, չորրորդ որդին՝ Դավիթը, ուսանում է Մոսկվայի Համայսարանի բժշկական Փակուլտետում, իսկ Հինգերորդը՝ Ասլանը ուսանում է Ս.Պետերբուրգի լեռնային ինստիտուտի Հինգերորդ կուրսում, նրա միակ գուսարը՝ Մարիամը ամուսնացած է երդիալ Հավատարմատար Հարությունովի հետ, որը նախկինում զբաղեցնում էր Թիֆլիսի գանձարանի պետական գույքի վարչության լիազորի պաշտոնը։

Ահա և ժամանակին հայտնի վանի ու Հակոբ Աթարեկով եղայրների բոլոր հետնորդները։ Նրանց Հիշատակը խորին ակնածանքով է Հարգվում ուսւների կողմից, որոնք գիտեն գնահատել Հեղափոր Կովկասում ուսւական գործերին գույց տված ծառայությունները և տեղական ողջ բնակչության մեջ պահպանելով նույն Հավատարմությունն ու նվիրվածությունը, որով Հայտնի էին իրենց նախնիները, Պարսկաստանի դեմ մղված մեր կողմների այն ծանր գարաշրջանում։

Կուսապատր՝ նրանց Հայրենի գյուղը, Հիմա այն գյուղը չէ, որը կար վանու ու Հակոբի օրոք, այն մեծացել ու վարածվել է ամեն կողմի վրա ու Հիմա կազմում է Հինգ անանձին գյուղեր, որոնք ամփոփում են իրենց մեջ մինչեւ 500 ծուխ։ Հին գերեզմանոցը, որում Հանգչում են վանու և Հակոբի ուկորները, պահպանվել է մինչեւ մեր օրերը։ Թող անհետանան նրանց տապանաքարերը, բայց նրանց մասին Հիշողությունը ժողովրդի մեջ երբեք չի կորչի։ Հայերի մեջ ըստ Հանրապետության կազմությունը ունի Համականական, իսկ յրաբերդ գիների ու Եղիշեական, որոնք պահպանել են Հին Զարաբաղի մարտական ոդին, մինչեւ այժմ գոյություն ունի մի Հին, շատ գեղեցիկ սովորություն, այնաև ոչ միայն պաշտոնական, այլև բնտանեկան ու անային տոնախմբությունների ժամանակ առաջին թարգմանում են թագավորի ողջության կենացը «Էս թարգ թագավորի կենացը»— դրա հետ առում են Հայերը։

Զրաբերդցիների մոտ առաջ երկար ժամանակ միացվում էր նիսկ որոշ ընտանիքներում դեռ այսօր էլ միացվում է մի այլ կետ նաց՝ մերիք վանու ու յուզբաշի Հակոբ Աթաբեկովների կենացը։ Նրանդ կյանքի օրինակով դաստիարակվել են բազմաթիվ հայ սեռունդներ, և նրանց մասին եղած հիշողություններին ժողովրդի կողմից միացվում է Ղարաբաղի պատմության փառապանձ ու յուրագործությունը էնթերի մասին եղած հիշատակը։

### ՆԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱՐԳՄԱՆՁԻ

1. Կուրակ-շալ - Քուռ գետը։
2. Ելիզավետպոլ - Գանձակ, այժմ կիրովաբադ։
3. Գիծառուսական զորքերի մշտական կայան սահմանի մոտ։
4. Դաշ-Ալիթի - Քարագլուխ։
5. Թալադ - պարսկ. բառակի՝ ապահարզան, հրաժարվել իրավունքը ներից հօգուտ այլ անձի։
6. Ինֆանտերիայի գեներալ - Հետեակի գեներալ։
7. Հանասին - Ասկարան գետի վտակը։
8. Երմոլով Ալեքսեյ Պետրովիչ (1772-1861), Վրաստանի գլխ. հրամանատար և Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար։ Սուվորովի և Կուտուզովի գինակից։
9. Այս Դալի-Ղազարը Հերոսաբար կռվել է նաև Ղարաբաղում։
10. Հակոբ-Վանու կրտսեր եղբայրը, մահացել է 1844 թվին։
11. Վանին մահացել է 88 տարեկան հասակում, այս հաստատվում է Կուսապատում գյուղի գերեզմանոցում՝ մինչեւ օրս պահպանվող նրա տապանաքարի արձանագրությամբ։
12. Նասիրաբադ-էջմիածնից ոչ հեռու գտնվող ներկայիս Ներսեսապատ գյուղն է։

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.